


Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Անդրանիկ Մարգարյան. «Համայնքների խոշորացումն ավելի շուտ գյուղերը քայքայելու նպատակ ունի, քան պահպանելու»

Մեր գրուցակիցը Անդրանիկ Մարգարյանը, խորհրդային տարիներին Շիկահողի խորհրդային տնտեսության (սովխոզ) կուսկազմակերպության քարտուղարն էր և մեխանիկը: 1993-ից Շիկահողի գյուղխորհրդի նախագահն էր, 1996-ից, երբ վարչատարածքային բաժանում տեղի ունեցավ Հայաստանում, մինչև 2003 թվականը ղեկավարել է Շիկահող համայնքը, այնուհետ «Շիկահող պետական արգելոցի» ինժեներ-մեխանիկն էր: Նույն գործառնությունն է անում այժմ «Ջանգեզուր կենտրոնային» համալիրում:
Մեկ տարի առաջ էլ Շիկահողը ընդգրկվեց խոշորացման ծրագրի մեջ, ավելի ստույգ,

այժմ Կապան խոշորացված համայնքի բնակավայրերից մեկն է: Թեպետ ասում են՝ վաղ է եզրակացություններ անել, բայց մի տարին էլ քիչ չէ, որ որոշ եզրակացություններ արվեն այդ գործընթացի մասին:
«Պատկանելի տարիք ունեն, հիշողությունս էլ տեղն է, մնան բան նախկինում էլ է եղել: Շիկահող, Սրաշեն գյուղերը ժամանակին միավորեցին մի տնտեսության մեջ. 1965 թվականին էր, բնականաբար, կենտրոնը՝ Շիկահողը զարգացավ, իսկ Սրաշենը հայտնվեց աղբյուր ազգականի կարգավիճակում: Իմ պատկերացմամբ՝ համայնքների խոշորացումն ավելի շուտ գյուղերը քայ-

քայելու նպատակ ունի, քան պահպանելու, համայնքը պիտի առանձին վարչական միավոր լինի, համայնքի ղեկավարն էլ պիտի ղեկավարվի վերելից:
Այս համատեքստում ուզում ենք մի հղում անել հանրապետական մամուլից. Շիրակի մարզի Ախուրյան խոշորացված համայնքի կազմում գտնվող բնակավայրերի ղեկավարները եւ բնակիչներն օրերս փակել էին դեպի Վրաստան տանող միջպետական ճանապարհը եւ իշխանություններից պահանջում էին հարգել իրենց սահմանադրական իրավունքը, չեղյալ համարել խոշորացման որոշումը, քանի որ կարճ ժամանակամիջոցում էջ 3

Երկաթուղու օրհասը

Երեւան-Բաքու երկաթուղու վերջին՝ Ջուլֆա-Մինջեւան հատվածը, կառուցվել է հրատապ, երկրորդ աշխարամարտի առաջին շրջանում եւ շահագործման է հանձնվել 1941թ. աշնանը: Նույն շրջանում ամերիկյան ներդրումների հաշվին, Իրանում բարելավվել ու կառուցվել են նավահանգիստներ, ավտոճանապարհներ, երկաթուղի: Ջուլֆան եւ Մեղրիով անցնող Երեւան-Բաքու երկաթուղին մեծ դեր են խաղացել պատերազմի շրջանում՝ Իրանով, ՍՄԶ-ին մատակարարվող ամերիկյան բեռների տեղափոխման համար:

Ընդհանուր առմամբ 17 մլն տոննա ամերիկյան մատակարարումներից Իրանով է անցել 4.2 մլն տոննա, որի ծանրակշիռ մասը հիշյալ ճանապարհով:

Առհասարակ, հայկական երկաթուղին կապող օղակ է՝ մի կողմից Ռուսաստանի, Կրաստանի եւ Ադրբեջանի, մյուս կողմից՝ Իրանի եւ Թուրքիայի միջև:

Թեեւ Մեղրիի հատվածում երկաթուղին միագիծ էր եւ հանդիպակաց շարժվող գնացքները հարկադրված էին կայարաններում սպասելով ճանապարհը զիջել միմյանց, բայց փոքր, գրեթե գրոյական թեքության հաշվին ապահովվում էր հսկայական բեռնաշրջանառություն: Տեսնել է պետք, թե ինչ ծավալուն ու բարեխիղճ աշխատանք է կատարվել ժամանակին՝ Արաքսի ծախակողմյան փոխ ուղղաձիգ ժայռերից մի քանի մետր հորիզոնական լայնություն կորզելու համար: Մինչեւ 1971թ-ը՝ Նախիջեւանի ջրամբարի շահագործումը, Արաքսը մայիսի վերջին այնքան էր վարարում, այնպես էր կատարում, որ ջուրը տեղ-տեղ ծածկում էր երկաթուղին, բայց երկաթուղու աշխատանքը գրեթե չէր ընդհատվում:

Երկաթուղու գործունեության վերջին տարիներին, յուրաքանչյուր ուղղությամբ օրական անցնում էր 20-ից 23 շարժակազմ: Յուրաքանչյուր շարժակազմի բեռնավորված վագոնների մվազագույն քանակը 50-ից ավելի էր:

Մի քանի ամիս շարունակ, ամեն օր՝ կեսգիշերին, աշխատանքից տուն գնալու ճանապարհն անցնում էր Մեղրու կայարանով: Այնտեղ ինժե պարտաճանաչ սպասում էր կայարանապետ ժողա Հայրապետյանը: Բարեխիղճ կայարանապետը՝ մի գավաթ թեյ հյուրասիրելուն զուգահեռ, ինժե էր հանձնում թղթի մի կտոր, որում հաշվառված էր Մեղրիով անցած ու Նախիջեւան մտած հայկական բեռներ տեղափոխող վագոնների քանակը, ընդ որում՝ մագուրի վագոններինն առանձնացված:

Չմեռ էր՝ 1992թ. սկիզբը, ջերմակայաններն աշխատում էին մագուրով, որը ծայրը-ծայրին հասցվում էր անիվների վրա: Առավոտյան այդ տվյալները հաղորդում էի վերադասին, որը համեմատվում էր Երեւան հասած բեռների տվյալների հետ՝ պարզելու համար, թե արդյոք Նախիջեւանում չեն յուրացվում հայկական բեռները:

Ապրիլի կեսին Մեղրիով անցնող բեռները Երեւան չհասան, եւ երկաթուղին դադարեց գործել:

Կարճ ժամանակ անց Մեղրի այցելեց ձեւավորվող բանակի նորանշանակ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանը՝ բարձրաստիճան սպայակազմի ուղեկցությամբ: Արեւելյան սահմանի էջ 5

Երբ գալիս է սեպտեմբերը

Սյունիքի մարզպետարանի դահլիճում օգոստոսի 25-ին տեղի ունեցավ ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունը, որին մասնակցում էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը եւ աշխատանքային երկօրյա այցով Սյունիքում գտնվող ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Մոտավորապես արված առթիվ ներկաներին շնորհավորեց Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը՝ կրթության ոլորտի մարդկանց մաղթելով հաջողություններ՝ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում եւ ներկաներին հորդորեց անկեղծ ու անկաշկանդ գրույց ունենալ, հնչեցնել իրենց հուզող հարցերը:
Այս անգամ փոխվել էր միջոցառման ձեւաչափը. նախկինում մարզի կրթության վարչության պետը թվերով ու փաստերով ներկայացնում էր անցած ուստարին, նոր ուստարվանը

միտված նախապատրաստական աշխատանքները, որից հետո ելույթ էր ունենում յուրաքանչյուր տարածաշրջանից մի ներկայացուցիչ: Խորհրդակցության ավարտին մայրաքաղաքից ժամանած նախարարության պաշտոնյան ամփոփում էր արդյունքները: Այս անգամ նախ իր տեսակետները շարադրեց կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: «Ցանկանում եմ ներկայացնել նախարարության առաջիկա անելիքները, ասաց նա, որից հետո կցանկանայի լսել ձեր առաջարկությունները, դիտողությունները, նաեւ քննադատությունն անցած չորս ամսվա կտրվածքով եւ անկաշկանդ քննարկում անել, քանզի կրթության ոլորտը պիտի լինի ապաքաղաքական: Որեւէ քաղաքական ուժ այլեւս չի ազդում եւ չի ազդելու դպրոցի գործընթացների վրա: Ուզում եմ ասել, էջ 4



Կրթության նախարար Արայիկ Հարությունյան

Արտակարգ իրավիճակների աշխատողի փոխըմարզկենտրոնն Կապանում

Սեպտեմբերի 4-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների աշխատողի օրն էր:

Սակայն տոնն այդ ժամանակ մարզում չնշվեց, քանի որ Սյունիքի փրկարարական ծառայության ներկայացուցիչները նույնպես այցելել էին մայրաքաղաք՝ մասնակցելու տոնական շքերթին:

Ուստի եւ արտակարգ իրավիճակների աշխատողի օրը Սյունիքում նշվեց սեպտեմբերի 6-ին:

Մարզի փրկարարներին շնորհավորելու եւ տոնական միջոցառմանը մասնակցելու համար մարզային փրկարարական վարչություն էին այցելել Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը, փոխմարզպետներ Գոռ Թադևոսյանն ու Նարեկ Բաբայանը, հանրապետական գերատեսչությունների մարզային կառույցների ղեկավարներ:

Տոնական միջոցառումը տեղի ունեցավ մարզային փրկարարական վարչության շահիրապարակում:

Նախ զեկուցվեց մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանին վարչության անձնակազմի եւ Կապանի հրշեջ փրկարար ջոկատի տոնին պատրաստ լինելու եւ տոնի առթիվ շարված լինելու մասին:

Լեոնիդ Գրիգորյանը ողջունեց մարզի փրկարարներին՝ ՀՀ արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա կապակցությամբ անձնակազմին մարտնչական հաջողություններ



երկրի համար կարեւոր ծառայության մեջ:

Լեոնիդ Գրիգորյանն անձնակազմին փոխանցեց նաեւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի եւ Փրկարար ծառայության տնօրենի շնորհավորանքներն ու բարենախառնակները:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը, ով նույնպես շնորհավորեց մարզի փրկարարներին՝ մասնագիտական տոնի կապակցությամբ՝ մշտնջենական, որ մարզի փրկարարները կարեւոր դերակատարություն ունեն Սյունիքի մարզի

բնականոն ընթացքի ապահովման գործում:

Ըստ Կարեն Համբարձումյանի՝ մարզում կա բարձր պրոֆեսիոնալիզմի չափանիշներին համապատասխանող փրկարար ծառայություն:

Եւ, այդուհանդերձ, ուղորտում կան խնդիրներ՝ հատկապես ժամանակակից տեխնիկայով ծառայությունը վերազինելու հարցում, ինչի ուղղությամբ Սյունիքի մարզպետարանն ու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը համապատասխան աշխատանքներ են իրականացնում:

Ելույթներից եւ շնորհավորանքներից հետո տեղի ունեցավ պարզեւտրման արարողություն:

Անձնակազմի չորս անդամի հանձնվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գերատեսչական մեդալ, մի քանի հոգու՝ նախարարի պատվոգիր:

Կարեն Համբարձումյանը Սյունիքի մարզպետի շնորհակալագրեր հանձնեց փրկարար ծառայության վեց աշխատակցի:

Այդ ամենին հաջորդեց շարահրապարակում կազմակերպված շրջայցը, որի ընթացքում ներկաները ծանոթացան ցուցադրված հատուկ տեխնիկական միջոցներին եւ սարքավորումներին, ինչպես եւ հրշեջ մեքենաներին:

Վերջում հյուրերն այցելեցին մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կենտրոն, ծանոթացան կենտրոնի աշխատանքներին, հնարավորություններին եւ խնդիրներին:

Տոնական միջոցառումն իրոք հազեցած էր: Հյուրերը հեռացան շնորհակալություն հայտնելով մարզի փրկարարներին՝ անձնվեր ծառայության համար, հեռացան հանդգված ու տպավորված, որ Սյունիքի փրկարարական վարչությունը կայացած կառույց է եւ պատրաստ է ըստ արժանիության ու մասնագիտական պատշաճ դրսեւորումներով կատարել իր առջեւ ծառայած խնդիրները:

«Սյունյաց երկիր»

Ուղերձ Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ



Սիրելի աշակերտներ, կրթության ու դաստիարակության գործի մկրտվածներ, ծնողներ

Յուրաքանչյուր ազգ կամ պետություն հզոր է նրանով, թե ինչպիսի սերունդ է աճեցնում, կրթում ու դաստիարակում: Կրթությունը եւ գիտելիքը բոլոր ժամանակներում ու գրեթե բո-

լոր ժողովուրդների համար անգնահատելի արժեքներ են եղել ու կան: Պատահական չէ, որ սեպտեմբերի 1-ը որպես գիտելիքի օր այսօր նշվում է աշխարհի բազմաթիվ երկրներում:

Մեր հազարամյա պատմության քառուղիներում, դարավոր փորձությունների ընթացքում գիրն ու դպրությունը մեզ համար դարձել են փրկության ճանապարհ, գոյատևման խարիսխ, ամեն անգամ օգնել մեզ վերածնվելու որպես հայ ու իսկական քրիստոնյա:

Գրի, գրքի, գիտելիքի, դպրոցի հանդեպ հարգանքն ու կրթություն ստանալու ձգտումը հայ մարդու էության գլխավոր նպատակն են, այսօր էլ շարունակվում է ավանդույթը՝ մեր հասարակության ապագան կոփվում է կրթական համակարգում:

Դպրոցի շնորհիվ է, որ հայ պատանին ձեռք է բերում գիտելիքներ, ճանաչում ու սիրում հայրենիքը, հարգանքով ու հավատքով լցվում մեր հերոսական անցյալի ու հաղթական ներկայի հանդեպ: Իզուր չէ ասված, որ մարդը հզոր էակ է, իսկ գիտելիքով լի մարդն ուղղակի անպարտելի է:

Իսկ անպարտելիության ծիլերը սերմանում եւ արմատավորում են Դուք՝ սիրելի ուսուցիչներ, Դուք եք ամենագործող կրթական բոլոր ժամանակներում ու բոլոր մարտահրավերների դեմ: Դուք եք պատրաստում վաղվա գինվորն ու սպան հայոց բանակի:

Հայրենիքի պաշտպանը միայն գինվորն ու սպան չեն, հայրենիքի պաշտպան են ուսուցիչն ու դասախոսը, բանվորն ու հողագործը, աշակերտն ու ուսանողը, հայրենիքի պաշտպան

են նրանք, ում համար հայրենիքն արժեք է:

Որպես հայոց բանակի սպա՝ իմ երախտագիտությունն են հայտնում ձեզ, որպես բարու սերմնացաններ, եւ վստահ եմ, որ ձեր հունձքով հպարտ, ձեր կրթած սաներին որպես ազնիվ եւ հայրենիքին պիտանի սերունդ եք պատկերացնում:

Թույլ տվեք շնորհավորել եւ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր, ուսուցման եւ դաստիարակման գործում ինչ-որ չափով ավանդ են ներդրում լինի դա պետական, քաղաքական, հասարակական կամ արվեստի գործիչ, մտավորական կամ լրագրող, վետերան, ընկեր կամ հարեւան, բայց կարծում եմ՝ այդ շարքերում մեծ բաժինը պետք է հասցեագրել հայ գորակամին, ով հուսալիորեն պաշտպանում է մեր հայրենի սրբության եզերքը եւ ապահովում անվտանգությունն ու խաղաղ արարումը:

Խոսքս ուղղվում են նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դրել դպրոցի շենից ներս:

Սիրելի առաջին դասարանցիներ, թող ամեն օր դպրոց մտնեք Աստուծո օրհնությամբ, բարին միշտ ձեզ հետ լինի, սիրեք գիրքը, սիրեք ձեր ուսուցիչներին, եղեք աշխատասեր, եւ թող ծիծաղ ու ժպիտը լինեն ձեր կյանքի ուղեկիցը:

Շնորհավոր տոնդ, դպրոց:

Մաղթում եմ բարի ու բեղմնավոր ուսումնական տարի:

Արարատ Մանուշարյան

ՀՀ Սյունիքի մարզի գինվորական կոմիսար 1 սեպտեմբերի 2018թ.

Ո՞վ է «գունավոր» եւ «թավշյա» հեղափոխությունների հովանավոր համարվող Զորջ Սորոսը

Վերջերս շատ է խոսվում այն մասին, որ Հայաստանի նոր կառավարության կազմը գրեթե ամբողջությամբ կապված է միլիարդատեր Զորջ Սորոսի կողմից ֆինանսավորվող հիմնադրամների, ՀԿ-ների եւ այլ կազմակերպությունների հետ: Զորջ Սորոսի մասին տեղեկությունները բավականին հակասական են, սակայն կան հստակ տվյալներ, որ մի շարք երկրներ եւ դրանց ղեկավարներ լուրջ կոնֆլիկտներ ունեն Սորոսի հետ՝ ընդհուպ անձնական թշնամանք: Ներկայացնում ենք այդ երկրների եւ կոնֆլիկտների մասին տեղեկություններ:

Իսրայել

Իսրայելում Զորջ Սորոսի գործունեությանը վատ են վերաբերվում ԱԳՆ մակարդակով: Իսրայելի ԱԳ նախարարը նույնիսկ Սորոսին ուղղված հայտարարություն էր արել առ այն, որ Սորոսը բազմաթիվ անգամներ փորձել

է քանդել դեմոկրատական սկզբունքներով ընտրված իշխանությունների հիմքերը՝ տարբեր կազմակերպություններ ֆինանսավորելով, որոնք սուտ են տարածել հրեական պետության մասին եւ փորձել են գրկել Իսրայելին ինքնապաշտպանության իրավունքից: Քաղաքագետ Ավիգդոր Էսկինն էլ ասել էր, որ Սորոսը վաղուց ծայրահեղ անցանկալի մարդ է Իսրայելում՝ չնայած իր հրեական արմատներին, քանի որ նա մշտապես փորձել է քանդել Իսրայել պետության հիմքերը: Սորոսի «Բաց հասարակության հիմնադրամ» կազմակերպությունը ոչ միայն փորձել է պետական քաղաքականությունը կազմաքանդել, այլ նաեւ ֆինանսավորել է հակահիսթեռլայական երթեր, փորձել է խառնվել երկրի ներքաղաքական գործընթացներին:

Իսրայելում հաքերները նույնիսկ կոտրել են «Բաց հասարակության հիմնադրամ»-ի էլեկտրոնային հասցեները եւ հրապարակել

անակներ, որտեղ պարզ երեւում է, որ միլիարդատերը միլիոնավոր դոլարներ է տրամադրել իսրայելական պետության քանդման համար դեմոկրատական արժեքների եւ փորձառնամանությունների իրավունքների պաշտպանության անվան ներքո:

DCLeaks-ի հաքերները նաեւ ցուցակ էին հրապարակել, որտեղ Եվրախորհրդարանի 226 պատգամավորներ են, որոնց «Բաց հասարակության հիմնադրամ»-ը համարում է իրենց գաղափարական դաշնակիցներ:

Հունգարիա

Հունգարիայում Սորոսի դեմ արշավը սկսվեց այն ժամանակ, երբ այդ երկրում կրթական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարվեցին, որի համաձայն փակվեց Սորոսի կողմից ֆինանսավորվող Կենտրոնական-Եվրոպական համալսարանը (CEU): Այս օրենքն արդյունք էր Հունգարիայի վար-

չապետ Վիկտոր Օրբանի եւ Զորջ Սորոսի մեջ եղած երկարատեւ հակամարտության:

Հունգարիայի վարչապետը բազմաթիվ անգամներ մեղադրել էր Սորոսի «Բաց հասարակության հիմնադրամ»-ի կողմից հովանավորվող ՀԿ-ներին նրանում, որ վերջիններս փորձում են ազդեցություն ունենալ երկրի քաղաքական գործընթացների վրա: Իրավապահ մարմիններն էլ բացահայտել էին դեպքեր, որ այս ՀԿ-ների անդամներն օգնում են Հունգարիա անօրինական ներթափանցել փորձող միգրանտներին, ովքեր փախստականի կարգավիճակ են ցանկացել ստանալ:

Վիկտոր Օրբանի խոսքերով ստուգումները բազմաթիվ իրավախախտումներ են արձանագրել Սորոսի կողմից ֆինանսավորվող հաստատություններում: Չնայած Հունգարիայում անցկացված ցույցերին, միջազգային եւ տեղի մի շարք

Կապանը մերժում է «Արարապցե-մենարի» նախաձեռնությունը

«Արարապցեմենար» ՓԲ ընկերության կողմից Կապան քաղաքում ցեմենտի աղացման արտադրամաս կառուցելու շուրջ հանրային քննարկման երրորդ փուլը սեպտեմբերի 4-ին վերստին ձախողվեց:

Խնդրո առարկայի շուրջ հանրային քննարկման փորձը ձախողվել էր նաև ս.թ. հունիսի 27-ին և հուլիսի 26-ին:

Անշուշտ, հարցը շատ զգայուն է Կապանի համար՝ նկատի ունենալով տարածաշրջանի բնապահպանական աղետալի վիճակը. եւ կապանցիների դիրքորոշումն այս պարագայում անսակարկելի է:

Ծրագրի նախաձեռնողներն ի սկզբանե պետք է գիտակցեին, որ բնապահպանական հարցը շատ ցավոտ է չվերահսկվող պղծամբարներով շրջափակված մարզկենտրոնում:

Կապան քաղաքի բնակիչ, Կապան քաղաքացիական շարժման ներկայացուցիչ Էդգար Յովհաննիսյանը «Այունյաց երկիր» լրագրողին քիչ առաջ տեղեկացրեց. «Յանրային քննարկումների առաջին եւ երկրորդ փուլերում բարձրացված հարցերը պատշաճ ընթացք չեն ստացել, ասել է թե՛ հանրային կարծիքը հաշվի չեն առել:

Իրականում, մինչդեռ, արտադրամասի համար նախատեսված վայրում ապօրինի

շինարարություն է իրականացվել՝ առանց համապատասխան թույլտվության եւ առանց քաղաքաշինական նորմերի պահպանման, ինչը պետք է վերացվի, իսկ տարածքը պիտի բերվի նախնական տեսքի»:

Ըստ Էդգար Յովհաննիսյանի՝ «Յանրային քննարկումներին ներկայացվող փաստաթղթերում իրավիճակը ճիշտ չէ գնահատված: Ավելի ծիշտ՝ գնահատումները կատարվել են՝ շրջանցելով կամ ոչ պատշաճ անդրադառնալով առկա ռիսկերին: Օրինակ, մեր հաշվարկներով տարեկան մոտ 40 տոննա փոշի կարտանետվի Կապան քաղաքի վրա, իրենց հաշվարկներով՝ 32 տոննա, որն իբր նորմալ է, ինչը շատ տարօրինակ է:

Մի խոսքով՝ ռիսկերով լեցուն է այդ նախաձեռնությունը, ավելի ստույգ՝ նման արտադրամասի կառուցումը չարիք է Կապանի համար:

Ահա թե ինչու է հանրության ակտիվ մասնակցությամբ հերթական անգամ խոչընդոտներ հարուցվել հանրային քննարկմանը, չէ՛ որ իրավիճակին ազդելու այլ գործիք չունենք:

Ստեղծված իրավիճակի մասին գրավոր տեղյակ կապահենք նաև հանրապետության



Վարչապետին, պատկան մյուս մարմիններին՝ ակնկալելով միջամտություն՝ ի շահ Կապանի եւ մեր երկրամասի»:

Տարածաշրջանի բնապահպանական կազմակերպության առնչվող հարցը, թեև չի արժարժվում հրապարակվել, մեկ այլ՝ ոչ պակաս ուշագրավ ասպեկտ եւս ունի, որը, ուզենք-չուզենք, հեռու չէ քաղաքական ասվածից:

«Արարապցեմենար» ՓԲ ընկերության կապանյան նախաձեռնության ակունքում ԲՀԿ-ն է՝ իր տեղական կառույցով:

Նախաձեռնության ընդդիմադիրների շարքում առավել ակտիվ են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները:

Էդգար Յովհաննիսյանի դիտարկմանը՝ ունանք ուզում են անհարկի քաղաքականացնել կապանցիների ազնիվ դիրքորոշումը (քանի որ խոսքն իրենց ապրելու իրավունքի մասին է), սակայն տեղի ունեցողը քաղաքական հարթությունից դուրս է ու չպետք է փնտրել կուսակցական ենթատեքստ: «Քաղաքացիական պայմանագիր» անդամներն ակցիային մասնակցում էին ոչ թե կուսակցական, այլ զուտ մարդկային եւ քաղաքացիական մղումով:

Դե ինչ, սպասենք, թե ինչ ընթացք կունենա «Արարապցեմենարի» կապանյան ողիսակալում...

«Այունյաց երկիր»

Անդրանիկ Մարգարյան. «Յամայնքների խոշորացումն ավելի շուրջ գյուղերը քայքայելու նպատակ ունի, քան պահպանելու»

էջ 1
այն կործանարար ազդեցություն է ունեցել իրենց համայնքների վրա:

-Անտեսված ենք բոլորի կողմից,- իր միտքը շարունակում է մեր գրուցակիցը,- մեկ տարի առաջ, երբ գյուղն ընդգրկվել էր համայնքների խոշորացման ծրագրի մեջ, նախընտրական քարոզարշավի շրջանակում խոշորացվող համայնքի ղեկավարի թեկնածու Աշոտ Յայրապետյանը գյուղ այցելեց, մի անգամ էլ Աժ ընտրությունների առիթով՝ Սյունիքի նախկին մարզպետ Վահե Յակոբյանը: Այդ քանը: Նման էպիզոդիկ այցերից հետո նրանք ինչպե՞ս կարող էին պատկերացնել գյուղացու հոգսը:

Թվում է՝ լեռներով ու անտառներով շրջապատված բնակավայրը խմելու եւ ոռոգելու ջրի խնդիր պիտի չունենար: Բայց եւ մեկն ունի, եւ մյուսը: Որոշ մարդիկ էլ սեփական ուժերով են խնդիրը լուծել: Բայց ոռոգման ջրի հարցը դեռեւս մնում է չլուծված: Նախկինում 4-5 կմ հեռավորությունից ոռոգման ջուրը հասցրել էին գյուղ: 360 տոննա տարողությամբ ջրամբարը մի օրում լցվում էր, իսկ հիմա՞...

-Եթե ջուրը չգա, այստեղ ապրելն անհիմաստ է, ոչ մի բան չեն կարող ստեղծել: Գյուղում 21 հեկտար տնամերձ կա, դրանք շատ թե քիչ մշակում են Հիկահող գետի ջրով, որ ամռան տապին բարակում է, համարյա չորանում,- ասում է գյուղի հոգսերով մտահոգ մարդը:

Պատմական տեղեկանք
Հիկահողն առաջին անգամ հիշատակվում է 13-րդ դարի առաջին կեսին: Եղել է Սյունիք նահանգի Կովսական գավառի նշանավոր բնակավայրերից մեկը, Հիկահողի մասին կարդում ենք Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ՝ Կովսական գավառի գյուղերի ցանկում, որ Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ: Աչքի անցկացնելով վանքապատկան գյուղերի ցանկը՝ կարելի է ենթադրել, որ Կովսական

Գավառի գյուղերի շարքում Հիկահողը մեծ բնակավայր էր: 20-րդ դարի սկզբին ունեցել է մոտ հազար բնակիչ եւ տարածաշրջանի ամենախոշոր ու բարեկարգ բնակավայրերից էր: Գյուղում 1887-ին դպրոց է բացվել, ապա փակվել է, նորից վերաբացվել 1905 թվականին: Հիկահողից է սերում Մելիք-Նուբարյան հայտնի տոհմը, այստեղ է ծնվել նշանավոր հոգեւոր եւ հասարակական գործիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը:

Նման անցյալ ունեցող բնակավայրն այսօր դժվարին ժամանակներ է ապրում: Բնակավայրում առկա 153 տնից 53-ում է մարդ բնակվում: Յիմա գյուղի կրթօջախում ընդամենն ութ աշակերտ է սովորում, ժամանակին տասնյակներով էր հաշվվում: Գյուղամիջում գտնվող մշակույթի տան եւ մանկապարտեզի դռները գոց են: Մշակույթի տան լուսամուտների մի մասի ապակիները չկան, դեպքից դեպք են այդտեղ միջոցառումներ կազմակերպվում, իսկ մանկապարտեզը 2003 թվականից, ինչպես փաստում է նախկին գյուղապետը, չի գործում, ժամանակին այդտեղ 16 երեխա էր հաճախում: Գյուղամիջի «նորություններին» ակնհայտ այն էր, որ վերջերս հուշաքար են տեղադրել, որի վրա փորագրված է «Փառք լեզենդար 97-րդ բրիգադի VI գումարտակի մարտիկներին»: Խոսքը Հիկահողի գումարտակի մասին է, որ նշանակալի ավանդ է ունեցել Արցախյան գոյամարտի կազմակերպողների գործում:

1929-ին գյուղում ստեղծվել է կոլտնտեսություն, 1965-ին վերակազմավորվել է խորհրդային կառուցված: Խորհրդային կայսրության փլուզումից հետո Հիկահողի խորհրդային տնտեսությունը 1991-ին լուծարվել է: Ստեղծվեց «Հիկահող» գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը, որ մի տարվա կյանք ունեցավ: Գյուղում ժամանակին 313 խոշոր եղջերավոր անասուն կար, հիմա 70-ն է, թե 80-ը: Խորհրդային տնտեսության ֆեր-

մաները փոշիացան: Նրանցից մեկը 200 գլխի համար էր նախատեսված: -Ինչո՞ւ է այսօր զբաղվում Հիկահողից, ինչպե՞ս է հոգում իր հանապազօրյա հոգսերը:

-Ոչ մի բանով, -պատասխանում է մեր գրուցակիցը,- 153 հեկտար մեքենահարմար վարելահող ունենք, այսօր ոչ մի հեկտար չեն վարում: Մարդ պիտի հողը մշակի, անասուն պահի, որ եկամուտ ստանա: Գյուղացին այլ բանից եկամուտ չի կարող ունենալ: Ամեն ինչ տարբերակներ է արվում: Չեթո՞վ անասուն պահելը վերացել է, առավելուց բաց են թողնում, անասունը որտեղ կարողանում, արածում է: Իմ՝ գյուղապետի պաշտոնը թողնելուց հետո ոչ մի քառակուսի մետր հող չի մշակվել: Մինչեւ 2003 թվականը տարեկան մինչեւ 40-50 հեկտար աշնանացան էր արվում, սկզբնական շրջանում՝ մի քիչ ավելի շատ՝ 70-80 հեկտար:

Հիկահողում նաև ապօրինություններ են տեղի ունենում: Վերջին ամիսներին այստեղ իսկա ընկուզեմիներ են հատվել: Եղանք մի գլխատված ընկուզեմու մոտ, որտեղ տակավին մնում էին ծառի ծյուղերն եւ կեղեւի կտորները:

-Կարծես ժողովրդի համար էլ միեւնոյն է, թե ինչ կլինի, ամեն ինչ մատուցված է անտերություն, բարձիթողի վիճակ է: Մեր գյուղում մոտավորապես հիսունին մոտ ընկուզեմի է հատվել: Յանրային սեփականություն է, արգելոցի մեջ չի մտնում: Ոչ մեկին դա չի հետաքրքրում: Անտառտնտեսությունն ասում է՝ մերն է, ո՞նց է ձերը, երբ գյուղի շրջագծի մեջ է մտնում:

Անդրանիկ Մարգարյանից հետաքրքրվեցինք, թե Յայրապետյան տեղի ունեցած հեղափոխությունն ի՞նչ անդրադարձներ ունեցավ գյուղում, հեղափոխության ակիբները հասե՞լ են այստեղ եւ ի՞նչ դրսևորումներով:

-Յասել է այնքանով, որ ժողովուրդն ուրախացել է, թե կողակտիչներին կբռնեն: Իսկ մյուս առումներով ոչինչ չի երեւում:



Ստածում են՝ ընկուզեմիները հատելու, փայտը տեղափոխելու ժամանակ Յայրապետյանի նոր ուստիկանապետն արդեն խորհրդակցություն էր հրավիրել, մարզերի ուստիկանապետներին հորդորել, որ ապօրինություններ չլինեն: Երեւի այդ ժամանակ ավտոկոնուկը, «Կամազը» այստեղ կանգնած՝ փայտը լցնում էին մեքենան եւ տանում: Ինչպե՞ս են այդ բնափայտը տեղափոխել, որ որեւէ տեղ մեքենան չեն կանգնեցրել: Ուզում են ասել, որ սա աշխատանքային նման մի բան է, այդ հեղափոխությունն էլ, մեկն էլ, մյուսն էլ, քանզի իրական կյանքի վրա չեն անդրադառնում:

Ի դեպ վառելիքայտի մասին: Անտառի պրնկին գտնվող գյուղի բնակիչները ծնունդն իրենց օջախները տաքացնելու խնդիր ունեն: Ոչ միայն Հիկահողի, այլև հարեւան Ծավի, Սրաշենի, Ներքին Յանդի բնակիչներն անցյալ տարի հավաքվել են մարզպետարանի առջև, մարզային իշխանություններից պահանջել բացատրելու, թե ինչպե՞ս պիտի տաքացնեն իրենց բնակարանները: Խնդրո առարկայի առնչությամբ խորհրդակցություն եղավ Կապանի համայնքապետարանում: Փոխանցեցին, որ գերմանական զարգացման բանկի (KFW) ֆինանսավորմամբ վառելիքայտ են հատկացնելու՝ յուրաքանչյուր ընտանիքին տասը խորանարդ մետր: Յետո այդ թիվը դարձավ ութ, իսկ երբ այդ վառելիքայտը բերեցին, տեղ հասցրին, Անդրանիկ Մարգարյանի ընտանիքին երկու խորանարդ մետր վառելիքայտ բաժին հասավ:

Հիկահող մեր այցի ժամանակ նկատառումներ հայտնեց նաև Հիկահողից Սամվել Աղաբեկյանը. «Տուրիստները գալիս են, իրենց հաճույքը ստանում, հեռանում: Եթե ես չեմ կարողանալու տունս փայտով տաքացնեմ, անտառից օգտվեմ, ինչի՞ս է պետք այս բնությունը՝ եթե երեխաս չի գալիս՝ գյուղում ապրելու: Ամեն ինչ հանուն մարդու բարօրության պիտի արվի: Այս հեղաշրջումից հետո մտածում ենք, որ ապագան լավ կլինի: Մեկն ինձ հարցրեց. ի՞նչ սպասելիքներ ունես, ասացի՝ երկու տղա ունեն, եթե տեսնեմ՝ նրանցից մեկը քոչը բարձել է մեքենան եւ հասել գյուղ, եւ ասում է՝ այ հեր, եկել եմ գյուղում ապրեմ, կիմանամ, որ գյուղն ապագա ունի, եթե այդպես չէ, ուրեմն նույն ջուրը կլինի, նույն ջրաղացը: Դեռ ավելին՝ կարծես մի գործընթաց է իրականացվում գյուղերը քանդելու, ոչնչացնելու նպատակով:

Եթե բնապահպաններն այդքան պայքարում են բնությունն ապականողների դեմ, ապա թող գան, պակասեցնեն մոշի թփերի տարածվելը, սիրուն անտառ դառնա, ոչ թե այ այսպիսի մոշուտ, կովն էլ չի կարողանում մտնի, արածի: Եթե բնությունն այդքան հաճելի է, այդ բնապահպաններից թող մեկը գա այստեղ, իմ տան կողքին մի ազատ տուն կա, ծրի տալիս ենք, թող գա, ապրի՝ դեռ մի բանով էլ կօգնենք: Միայն տեսնեմ՝ ինքը ծնանք ո՞նց է ապրելու, ես էլ իրեն նայեմ, ապրեմ»:

ՎԱՐՄԱ ՕՐԲԵԼՅԱՆ

ՈՒՍՈՒՑԶԻ ՎԱՍՏԱԿԸ ԳՆԱՅԱՏՈՂ ՆՎԵՐ



Յրապարակի վրա է ՀՀ ժուռնալիստների միության անդամ Սերյոժա Գասպարյանի «Ուսուցիչ» գիրքը: Սերյոժային ճանաչողները լավ գիտեն, որ նա մասնագիտությամբ հաղորդակցության ուղիներին ինժեներ է, ով երկար տարիներ աշխատել է Եղեգնաձորի ճանապարհաշինական վարչությունում, ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությունում, վաստակել սեր ու հարգանք գործընկերների կողմից:

Բայց արի ու տես, որ հմուտ այդ ինժեների հոգում խուտուտ է եկել նաև ստեղծագործելու աստվածաշնորհ կարողությունը ու նրան մղել դեպի լրագրության հետաքրքիր աշխարհը: Ու պատահական չէր նրա «Արծաթ աղբյուրների հեթաթը» ժողովածուն՝ տպագրված 2016-ին: Դրանով նա հաստատեց արարող իր ոգու ծարավը, պատկերավոր մտածողության հրաշքը, սեփական հուզաշխարհի երանգները մարդկանց նվիրելու ունակությունը: Արդյունքում՝ նաև այս նոր գիրքը ժողովրդանվեր հայ ուսուցչի մասին:

Տարբեր առիթներով Սերյոժայի հետ ունեցած հանդիպումների ժամանակ նա անհուն սիրով ու երախտագիտությամբ էր խոսում և այսօր էլ բարձրաձայնում է ուսուցչի դերի մասին ունեցած իր հաճելի կարծիքը՝ ամեն անգամ վկայակոչելով ամենա խելացի բարձր գնահատականն ուսուցչի վերաբերյալ: Երեկ

նախախնամության հրամայականով (թե բարությանը) Սերյոժան կյանքի ընկերուհի է ընտրել հենց մի այնպիսի ուսուցչուհու, ով ոչ միայն ժողովրդի իմաստուն դասերի նվիրումով պիտի դաստիարակեր հազարավոր հայրենասեր մանկավարժների, գիտնականների, գինվորների, բարձրաստիճան սպաների, աշխատանքի հերոսների, այլև պիտի երջանկացներ իրեն՝ հայուհու հավատարմությամբ, տան աստվածուհու խոհեմությամբ, զավակների հանդեպ ունեցած պատասխանատվությամբ, թոռների հանդեպ ցուցաբերած երջանիկ տատիկի սիրով ու հոգատարությամբ: Իսկ այդ ուսուցչուհին Անուշ Գրիգորյանն է, ուն ունեցած մանկավարժական աստղալից ճանապարհով կարող է հպարտանալ յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ:

Բազմավաստակ ուսուցչուհու մանկավարժական, գիտամշակութային ուղին գրքում գնահատված է ըստ ելության, հաստատված, խոսուն փաստերով ու վկայագրերով: Սերյոժա Գասպարյանը պատասխանատվության ամենախիստ զգացունով գրքում ներկայացնում է ազգային հպարտություն հանդիսացող ուսուցչուհու արժանապատիվ կյանքն ու գործը:

Ծանոթանալով գրքին՝ ասես հոգու աչքերով տեսնում ես Անուշ Գրիգորյանի գործունեությունը՝ ասեղնագործված գրեթե ինչ երանգներով ու հպարտանում, որ ազգը փառավորվում է նման զավակներով: Երեկ Աստուծո մատը խառն է հայոց լեռնաշխարհն աստղազավակներով զարդարելու գործում: Նրանցից մեկը հենց Անուշն է, ով ծնվել է 1952թ. հունվարի 15-ին Ղափանի շրջանի Շիշկերտ գյուղում: Հետագայում ընտանիքով տեղափոխվել է Բնակություն է հաստատել Երեւան քաղաքում: 1978-ին ավարտել է ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետը, մանկավարժի որակավորումով գործուղվել Եղեգնաձորի շրջանի թիվ 1 միջնակարգ դպրոց, այնտեղ էլ

ամուսնացել ու մեր ժողովրդին նվիրել երկու խելացի դուստր: Անուշն ուսուցչուհու պաշտոնից անցել է ուսնասվարի դժվարին աշխատանքի, ապա ղեկավարել դպրոցը՝ որպես տնօրեն, ճանաչվել 2003-2004 ուս. տարվա լավագույն ուսուցիչ: Նա իր գիտամանկավարժական հարուստ գործունեության շնորհիվ ճանաչվել է եւ նախկին Խորհրդային Միության, եւ անկախ Հայաստանի բոլոր կրթօջախներում որպես իր գիտելիքներն անընդհատ հարստացնող, նոր մեթոդները յուրացնող մասնագետ:

Սերյոժա Գասպարյանի «Ուսուցիչ» գիրքը կրկին գալիս է հաստատելու, որ հազարամյակների ընթացքում արհավիրքների ենթարկված, 1915-ի Մեծ եղեռնը տեսած մեր ժողովուրդը, ի հեճուկս իր հին ու նոր ուսուցիչների, հարատևել է մատաղ սերունդին հայեցի դաստիարակող, գիտելիքների պաշարով հարստացնող այնպիսի մանկավարժ դաստիարակների շնորհիվ, որպիսին Անուշ Գրիգորյանն է:

Գրքին շուք են տալիս Անուշ Գրիգորյանի գերդաստանը ներկայացնող գունավոր լուսանկարները՝ նորից ու նորից հաստատելով, որ մեր ժողովուրդը հզոր ու հավերժական է իր անուր ու ավանդապահ ընտանիքներով:

Հաճելի է ընդգծել նաև հանգամանքը, որ բավականին ծավալուն այս գիրքը տպագրվել է Անուշ Գրիգորյանի դուստրեր Լուսինե եւ Գայանե Գասպարյանների ընտանիքների տրամադրած ֆինանսական միջոցների հաշվին:

Ս. Գասպարյանի հեղինակած «Ուսուցիչ» գիրքը խորքային բովանդակությամբ ու վավերական փաստաթղթերի առկայությամբ շնորհիվ արժեւորվում է ոչ միայն կրթության, այլև ազգագրության բնագավառի տեսադաշտում:

Նման գրքերի անհրաժեշտությունը կարելու է նաև գալիք պատմության համար:

ՎԱՐԳԵՍ ԽԱՆՈՅԱՆ

Երբ գալիս է սեպտեմբերը



Էջ 1 **որ Սուրեն Խաչատրյանը եւ Վահե Հակոբյանն այլևս ունեն գրո ազդեցություն մարզի դպրոցների վրա: Որտեղ այդ ազդեցությունը գրոյից մի քիչ ավելի կլինի, մենք համապատասխան քայլեր կձեռնարկենք: Սիրելի տնօրեններ, ուսուցիչներ, մենք միասին ուրոտը կարգի պիտի բերենք, որովհետեւ այն թափօթվածությունը, որ եղել է տարիներ շարունակ զգալիորեն նվազեցրել է դպրոցի վարկը, ուսուցչի վարկանիշը: Կարծում եմ՝ կարճ ժամանակում, արդյունավետ գործունեության շնորհիվ այդ վարկանիշը կբարձրացնենք»:**

Այնուհետև նախարարը խոսեց մի նախաձեռնության մասին, որ միանշանակ չընդունվեց հանրության կողմից, մասնավորապես տարբեր կարծիքներ: Խոսքը դպրոցականների ավարտական քննությունների միասնական-կենտրոնացված ընթացակարգով անցկացնելու նախագծի մասին է: «**Գիտեմ, որ դպրոցների տնօրեններ եւ ուսուցիչներ կան, որ լուրջ մտավախություններ ունեն այս կապակցությամբ: Որտեղի՞ց առաջացավ այդ գաղափարը, եւ ինչու՞ եմ այն հրատապ համարում: Իմ նշանակումից հետո մասնակցել եմ ավարտական քննություններին եւ եկել այն եզրակացության, որ չունենք աշակերտների ունեցած գիտելիքների հստակ պատկերը, ինչն անհրաժեշտ է լուրջ բարեփոխումներ անցկացնելու համար: Առհասարակ դպրոցականների գիտելիքների միասնական ստուգումը, կարծում եմ, շատ հստակ պատկեր կտա, թե ինչ վիճակում է հանրակրթությունը: Իմ կանխատեսումն այն է, որ քննությունն հանձնող աշակերտների կեսը դրական գնահատական չի ստանալու, որոշ կանխատեսումներով մինչեւ 70-80 տոկոսը: Բայց պիտի գնանք այդ քայլին, մի անգամ այս երեւոյթին առեւտրվենք: Գնահատումն է թեստավորման կենտրոնը հոկտեմբերին թեստավորում կանցկացնի, եւ կունենանք պատկերը: Նախատեսում ենք 9-րդ դասարանի երկու առարկաների քննությունները դարձնել միասնական»:**

Նախարարը հորդորեց ուշադրություն դարձնել կրթության ոլորտում տեղ գտած բացասական երեւոյթների վրա, նախելառաջ, դրամահավաքի, մի բան, որ ըստ բանախոսի առավել բնորոշ է մայրաքաղաքի եւ հանրապետության դպրոցներին. «**Գիտեմ՝ երեւոյթը զգալի նվազել է, բայց սեպտեմբերի մեկին եւ մեկ ամիս հետո ուսուցչի օրվան նվիրված միջոցառումներին խնդրում եմ ուշադիր լինել: Ուսուցչին մի փունջ ծաղիկ նվիրելու համար բնավ անհրաժեշտ չէ հազարավոր դրամներ հավաքել աշակերտներից»:** Անդրադառնալով դպրոցական համագեցեստի խնդրին նախարարը հայտնեց, որ դպրոցներն իրենք են որոշում դպրոցական խորհուրդների միջոցով, թե ինչ հա-

մագեցեստ պիտի կրեն աշակերտները, բայց եթե մի աշակերտ կամ ծնող կիրառարկի սեւ-սպիտակ համագեցեստից, նրանց որեւէ մեկը չի կարող ինչ-որ բան պարտադրել: «**Կան կարծիքներ, թե իբր դպրոցական համագեցեստը աշակերտին ավելի մեծ պատասխանատվություն է ներշնչում ուսումնական պրոցեսի հանդեպ, եւ նման կարծիք չունեն: Ինձ հայտնի դարձավ, որ որոշ դպրոցների տնօրեններ հազուստ ենրկրող կազմակերպությունների հետ բիզնեսներ են անում, եւ պիտի ծնողներն էլ դրանից տեղյակ լինեն: Հանձնում ենք այն է, որ այս խնդրում աշակերտին պիտի ազատություն տալ եւ կադապրների մեջ չդնել»:**

Նախարարի ելույթից հետո հարցեր տալու հնարավորություն տրվեց մարզի դպրոցների տնօրեններին: Նախ օրվա բանախոսին հարցեր ուղղեցին մարզպետարանի կառույցների աշխատակիցները (մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Գրիգոր Թադևոսյան, մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արսեն Գրիգորյան, մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ Վովա Այվազյան), ինչը նախարարի վերաբերյալ հարուցեց. «**Տնօրեններից ոչ մեկը չի՞ ուզում հարց տալ»:**

Ինչեւէ, այնուհետև հերթը հասավ տնօրեններին: Կապանի Հունան Ավետիսյանի անվան N9 ավագ դպրոցի տնօրեն Արուս Միրզոյանը հայտնեց, որ իրենց դպրոցը 65 տարեկան է, բնականաբար, նորոգման խնդիրներ են առաջացել: Բանն այն է, որ Մեղրիի եւ Կապանի տարածաշրջանների դպրոցների աշակերտների միասնական-ավարտական քննություններն անցկացվում են դպրոցի մարզադահլիճում, որն անմխիթար վիճակում է: Այս ուստարվանն ընդառաջ դպրոցի տնօրինությունը դիմել է կրթօջախի նախկին շրջանավարտներին, որոնց ուժերով մի քանի դասասենյակ նորոգվել է, իսկ մարզադահլիճի նորոգումը տակավին մնում է խնդրահարույց: Նախարարը նկատեց, թե երբ դպրոցները բաշխվում էին հիմնականների եւ ավագների, ամենավատ պայմաններով դպրոցական շենքերը բաժին ընկան ավագ դպրոցներին: Եվ դա բացատրեց նրանով, որ այդ ժամանակվա կրթության եւ գիտության նախարարներն իրենց տեղում չեն եղել:

Արծվանիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Կարո Անդրեասյանն այն հարցը բարձրացրեց, որ Այունիքի մարզում ուսուցիչների աշխատավարձերի դրույքաչափերն ավելի ցածր են, քան Հայաստանի այլ մարզերում: Եղան նաև այլ հարցադրումներ՝ կապված դպրոցների լաբորատորիաները սարքավորումներով համարելուն, գյուղական մանկավարժներին արտոնություններ տալուն եւ այլն:

ՎԱՐԿԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գրքերի շնորհանդես



Քյան առաջնորդ Նիկոլ Փաշինյանն իր կողմնակիցների հետ Գյումրի քաղաքի կենտրոնական Վարդանանց հրապարակից սկսեց քայլարշավը մինչեւ Երեւան, մինչեւ մայիսի 8-ը, երբ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ նիստում Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ:

Թատրոնի դահլիճում մշակութային այս միջոցառման առթիվ բարենաղթանքի խոսք ասաց Կապանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղափանյանը: «Եղիթ-Պրինտ» հրատարակչության հիմնադիր տնօրեն Սկրտիչ Կարապետյանը ներկայացրեց «Եղիթ-Պրինտ» հրատարակչությանը, որ հիմնադրվել է մոտ 25 տարի առաջ: Պատմեց, թե վերջերս ինչ գրքեր են դրվել ընթերցողի սեղանին: Մասնավորապես, «Խաղաղոց» գիրքը լույս է տեսել այս տարվա հունվարի 23-ին եւ հասցրել դառնալ Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային բեսթսելլեր՝ այսինքն՝ ամենաշատ վաճառված գրքերից: «Եղիթ-Պրինտ» հրատարակչությունն ամսօրյապես ձեռք բերեց գրքի հեղինակային իրավունքը եւ այն Հայաստանում արդեն իսկ հասցրել է դառնալ ազգային բեսթսելլեր: «Եղիթ Պրինտ» հրատարակչության կոմերցիոն տնօրեն Արեգ Կարապետյանը նշեց, որ իրենց համար շատ կարեւոր է, որ մարզաբնակ ընթերցասերն ամսան չմնա մշակութային միջոցառումներից: Նաեւ նշեց, որ երկու գրքերն էլ լույս են ընծայվել միաժամանակ: Գրքերի շնորհանդեսի անհրաժեշտությունը իր ելույթում կարեւորեց «Ծիածան» առաջնորդների կենտրոնի տնօրեն Սուսաննա Մարտիրոսյանը:

Ի դեպ, թատրոնի ճեմասրահում «Եղիթ-Պրինտ» հրատարակչության գրքերի ցուցադրանք-վաճառք էր կազմակերպվել: Կապանի ընթերցողը հնարավորություն ունեցավ ձեռք բերել իր նախընտրած գիրքը:

ՎԱՐԿԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Փաստաբանի փրեխներով այս փղան կկարողանա՞ երբեւէ փրապել իր փեշակին, թե՛...

Հայաստանում գոյություն չունեցող «Չանգեզուր TV» ինքնակազմ լրատվամիջոցն օգոստոսի 30-ին հերթական ապատեղեկատվություն է սփռել՝ «Այունյաց երկրի» խմբագրին առնչվող, ով քաղաքացիական երկու գործով հայցվորի ներկայացուցիչ է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

Օգոստոսի 28-ին դատարանի Սիսիանի նստավայրում քաղաքացիական այդ գործերով հերթական դատական նիստերն էին, եւ Կապանից «ստեղծագործական» հատուկ խումբ էր գործուղվել Սիսիան՝ դատական նիստերը տեսածայնագրելու ու Սամվել Ալեքսանյանի հետ զրուցելու հույժ կարելու «պետական» առաքելությամբ:

Դատական նիստերի տեսածայնագրումը, սակայն, չթույլատրվեց, քանի որ նախորդ նիստերում էր դեռեւս նման որոշում ընդունվել նախագահող դատավորի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 114-ի 3-րդ մասը: «Դատական նիստի կինոն եւ լուսանկարահանումը, տեսածայնագրումը, ինչպես նաեւ հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատավորի թույլտվությամբ»:



Դատական նիստերն ընթացել են նորմալ, օրինական հունով ու որոշակի աշխատանքներից հետո հետաձգվել:

Եվ, չնայած իրավիճակի պարզությանն ու հստակությանը, «լրատվամիջոցի» փրփրաբերան աղջիկը (առանց կակազելու) ինչ-որ նյութ է շինել՝ ձգտելով ոչ թե տեղի ունեցածը ներկայացնել հանրությանը, այլ հաճոյանալ գաղութարարներին, սակայն սովորական նեյնիմական է ստացվել՝ խուսափողական, տարտամ եւ անորոշ տեքստով:

Արձանագրեմք, որ փրփրաբերանն այս անգամ եւս անազնիվ ու անմաքուր է խաղացել: Եթե մի փոքր բարոյականության ունենար, ապա կներկայացներ ամբողջն ու իրականը: Եվ մասնավորապես կասեր, թե ինչու է Սամվել Ալեքսանյանը վերստին հրաժարվել հարցազրույցից: Իսկ խմբագիրը դատարանի շենքում (նիստերից հետո), մի քանի հոգու ներկայությամբ, պատճառաբանել էր իր դիրքորոշումը՝ հայտարարելով երկրից «Հայաստանում «Չանգեզուր TV» անուն հեռուստալրատվամիջոց չկա: Այն վիստում է հեռարձակման օրինական լիցենզիա ստացած «Սոսի» փոխարեն: Այն վիստում է «Սոսի»-ի հիմնադիր «Չանգեզուր» ՍՊԸ-ի մասնակիցների սեփականությունը զավթելու արդյունքում եւ սպասարկում է Սյունիք ներխուժած գաղութարարներին: Ու քանի որ մեր երկրամասում ընդդեմ նրանց ազգային-ազատագրական պայքարի նոր փուլ է սկիզբ առել, եւ քանի որ այդ լծե լրատվամիջոցը սպասարկում է գաղութարարներին ու որեւէ կապ չունի Սյունիքի հետ, մենք չենք կարող հարցազրույց տալ: Եվ հետո, լրագրողի անվամբ ներկայացող լրջություն, անկեղծություն, վստահություն չի ներշնչում: Միգուցե եւ հարցազրույց տայինք, եթե նրա փոխարեն

հանդես գար այլ անձնավորություն՝ մի քիչ լրջություն եւ պատկառանք ներշնչող»:

Փոքրիկ, բայց էական այս դրվագը Կահեի քարտուղարուհին եւ նրա թիկնազորի տղերքի համար սուրճ պատրաստողը թաքցրել ու չի ներկայացրել, որպեսզի հեռուստադիտողը չիմանա ճշմարտությունը:

Եվ իրականությունը ներկայացնելու, բուն գործի մասին խոսելու փոխարեն (եթե, իսկապես, այդ նյութն իրեն հետաքրքրում էր, եթե դրա համար էր Կապանից Սիսիան հասել), խուսափող տրամադրել է տվյալ քաղաքացիական գործերով հայտնի երկու դերասանին, որպեսզի պատվիրատուին զեկուցի՝ տե՛ս, որքան հավատարիմ են քեզ ծառայում, տե՛ս, Սամվել Ալեքսանյանի մասին նյութ են հորինել, ու՛ր է իմ փայլը...:

Սակայն Գեորգի Մելիքյան փաստաբանն էկրանին կրկին երեւաց ողորմելի առաքելությամբ:

Սուտ երկու տարի շարունակ (վարձատրվելու պարագայում) չկարողանալով պատշաճորեն պաշտպանել վստահորդ բանասարկուի շահը, չկարողանալով գոնե մեկ պռատ ապացույց ներկայացնել պատասխանողի ճշորած վնգստողը հիմնավորելու համար (անգամ ապացուցողական բեռը դատարանի կողմից բաշխվելուց հետո), նորից հույսը դրեց վա-

րահաչելու էժանագին գործելակերպի վրա, ընդ որում՝ խոսելով ոչ թե բուն գործերի, այլ այն մասին, թե ինչու է հայցվորի ներկայացուցիչը դեմ արտահայտվել դատական նիստերը տեսածայնագրելուն:

Յետո պարզապես նողկալի դարձավ դատողության վարժանք անելով Գորիսի ամենաբարեհամբավ կրթօջայններից մեկի մասին:

Հաղորդման այդ դրվագն իսկապես մոտրելու տեղիք է տալիս:

Մարդը չորս-հինգ տարի իրավաբանական կրթություն է ստացել (ասում են), տարիներ շարունակ փաթաթվել փաստաբանի յափնջու ու հեռուստալրատվության մեջ: Երբեք մեզ հետաքրքրող գործերի մասով՝ այդպես էլ լիարժեք չտիրապետելով իր փեշակին: Եվ այդքանից հետո համարձակվում է մտավարժանք անել իր հետ հեռավոր աղերս անգամ չունեցող կրթության ոլորտի մասին:

Դրա փոխարեն կարող էր, ասենք, երկու տարի ձգձգվող դատավարության ընթացքում գոնե մեկ փաստ բերել, թե ինչու է, այնուամենայնիվ, իր վստահորդը վնգստում:

Եվ այնքան անազնիվ է, որ հայտարարում է, թե գործը ձգձգվում է հայցվոր կողմի պատճառով՝ չփաստարկելով իր ասածը: Եվ այնքան վախկոտ է, որ չի համարձակվում խոստովանել. «Դատաքննությունը ձգձգվում է, քանի որ չեմ կարողանում իմ վստահորդի զրպարտող արտահայտությունները հիմնավորել, պաշտպանել նրան, ու միակ ելքը ձգձգելն է»:

Եվ այնքան անճար է, որ չի ուզում խոստովանել նույն գործերով Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարաններում չորս անգամ կրած խայտառակ պարտության մասին:

Երկաթուղու օրհասը



Դավիթ Մաթեոսյան

Ել 1 պաշտպանվածության ուսումնասիրության ժամանակ՝ իմանալով, որ չգործող երկաթուղին սահմանագծում երթեւեկելի է, մտավախություն հայտնեց, թե զրահապատ գնաքի ներխուժումը կործանարար կարող է լինել Մեղրիի համար: Նա պնդեց, որ սահմանագծի վրա երթեւեկության խոչընդոտումը պարտադիր է: Հենց նույն պահին, նրանց ներկայությամբ, սահմանագծի մոտ, ջրթող կամրջակի հեծանների տակ տեղադրված ամուճիտի պայթեցումով փարատվեց գեներալի մտավախությունը:

Արաքս գետի վրա լողացող կամրջի գործելուն պես՝ իրանական Ջուլֆայի երկաթուղու ղեկավարը ժամանեց Մեղրի, եւ ասաց, որ մեր թույլտվությամբ ուզում են Մինջեւանում մնացած 250 վագոն իրանական բեռները Մեղրիով տեղափոխել Ջուլֆա: Ասաց, որ ադրբեջանական կողմը համաձայն է: Մենք, իհարկե, ասացինք, որ բեռները հազիվ թե պահպանված լինեն, բայց անմիջապես ընդառաջեցինք եւ համատեղ ջանքերով վերականգնեցինք սահմանագծի պայթեցված հատվածը: Դրանից անմիջապես հետո՝ 1992թ. հունիսի սկզբին, կազմակերպվեց եռակողմ հանդիպում՝ հայկական, իրանական եւ ադրբեջանական պատվիրակությունների մասնակցությամբ: Բնարկումը տեղի ունեցավ սահմանամերձ ուղեկալում: Ադրբեջանական պատվիրակությունը՝ գեներալ Քյազիմովի գլխավորությամբ, եկավ երկաթուղով՝ ոտքով: Մենք նրանց դիմավորեցինք սահմանագծին եւ ուղեկցեցինք ուղեկալ: Գրավոր արձանագրվեց, որ բեռների տեղափոխման խոչընդոտները վերացված են, եւ որոշվեց՝ հաջորդ օրվանից սկսել բեռների տեղափոխումը: Հանդիպման ավարտին՝ մեր վաշտի մի քանի զինվորի ուղեկցությամբ, ճանապարհեցինք ադրբեջանական պատվիրակությունը, իսկ մենք՝ իրանական պատվիրակության հետ, մեքենաներով շարժվեցինք դեպի Մեղրի: Ուղեկալից հազիվ երկու հարյուր մետր էին հեռացել՝ ադրբեջանական դիրքից սկսեցին մեզ ուժգին գնդակոծել: Այդ դիրքից մեր ճանապարհի մոտ 100 մետրանոց մի հատված էր տեսանելի: Բարեբախտություն էր, որ ոչ ոք չտուժեց: Գնդակոծության պահին ադրբեջանական պատվիրակությունը դեռ սահմանագծի չէր հասել: Ուղեկցող տղաները, սակայն, ռադիոկապով ցուցում ստացան շարունակել ուղեկցումը: Իրանական պատվիրակության ղեկավարը անմիջապես արձագանքեց. «Դուք ծիշտ էիք, ուրեմն Մինջեւանում ոչ մի բեռ էլ չի մնացել»:

Մեկ շաբաթ անց երկաթուղու կապով միացավ Նախիջեւանում տեղակայված ռուսական 75-րդ մոտոհրաձգային դիվիզիայի իրանաճարտի տեղակալ Մարկելովը: Այն նույն դիվիզիայի, որը մինչեւ 1991թ. օգոստոսի 8-ը պաշտպանում էր Մեղրիի ադրբեջանաբնակ Նյուվադի գյուղի կենսագործունեությունը Ադրբեջանի կազմում: Նա խնդրեց օժանդակել Մեղրիով տեղափոխելու այլեւս սննդամթերքի դիֆիցիտ ունեցող դիվիզիայի՝ Մինջեւանում մնացած մեկ վագոն պահածոն: Հաջորդ օրը նա իմ հյուրն էր, իսկ նրա մի քանի ենթակազմեր քարշակով շարունակեցին ճանապարհը Մինջեւան: Վերադարձան նախատեսվածից շատ ուշ: Քաշքշոցների էին ենթարկվել: Հազիվ էին գործը զուլխ բերել: Պատմեցին, որ բացի իրենց պատկանող վագոնից մնացած բոլոր վագոնները կանգնած էին բաց դռներով՝ դատարկ:

Սա Մեղրիով անցած վերջին գնացքն էր: Երկաթուղու չգործելու պատճառով Հայաստանը հայտնվեց խոր շրջափակման մեջ:

Սկսեց էներգետիկ ճգնաժամը: Առաջիկա ծնունդ ծանր էր լինելու: Այդ ծնունդն ընդառաջ էր, որ ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը ոստիկանապետերի խորհրդակցություն հրավիրեց եւ իրեն հատուկ խորհմաստությամբ արտասանեց ընդամենը մեկ նախադասություն. «Ձեր աշխատանքի գնահատման առաջին չափանիշը լինելու է այն, որ ձեր պատասխանատվության տարածքներում ցրտից ու սովից մարդ չմահանա»...

Լեւոն Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման շրջանում Սյունիք հաճախակի այցելող առաջատար երկրների դեսպաններն առաջին հերթին հետաքրքրվում էին, թե արդյոք պահպանվում է երկաթուղին: Ստանալով համոզիչ պատասխան, որ հնարավոր է Կապանից երկաթուղով, ազատագրված տարածքներով երթեւեկել Մեղրի՝ բավարարված հեռանում էին:

Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման շրջանում՝ 2003 թ-ից սկսած, ապամոնոտաժվեց ողջ երկաթուղին՝ Կապանից մինչեւ Մեղրի:

Նյուվադիի բարդ ու դժվարանցանելի ճանապարհի այլընտրանք, կիսակառույց ճանապարհը շարունակելու փոխարենը՝ թույլատրեցին մեքենաների երթեւեկը քանդված երկաթուղու Շվանիձոր-Նյուվադի հատվածի հարթակով:

Մերձ Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում, նախ, Ազարակի կոմբինատի հիմնականում չգործող, ցուցադրական նպատակներով կառուցված հետադարձ ջրամատակարարման խողովակաշարը հատվածաբար անց կացվեց երկաթուղու հարթակով:

2015-2016թթ. կառուցվեց՝ դեռ 1996թ-ից նախագծվող, Մեղրի գետից ջրընդունմամբ, Արաքսի հովտի գյուղատնտեսական նշանակության հողերի ինքնահոս ոռոգման ծրագրի ձախակողմյան ճյուղը: Սակայն, այլընտրանքի առկայության պայմաններում Լեհվազ գյուղից մինչեւ Նյուվադի ձգվող խողովակաշարի հիմնական մասն անց է կացվել երկաթուղու առանցքով:

Վերջին ամիսներին իրականացվում է Մեղրիի մաքսային կետից սկսած, Արաքսի ափով, երկաթուղու հարթակին զուգահեռ ձգվող միջպետական ճանապարհի 7-8 կմ հատվածի անիմաստ լուսավորության մի ծրագիր: Հավանաբար արտաքին պարտքի բեռն ավելացնելու նպատակով: Այս ծրագրի լարման տրանսֆորմատորները եւս տեղադրված են հենց երկաթուղու հարթակի վրա:

Հիմն կառուցվում է ինքնահոս ոռոգման վերոհիշյալ ծրագրի դեպի Ազարակ ձգվող աջակողմյան ճյուղը: Շուրջ 10 կմ երկարությամբ, մոտ 400մմ տրամագծով խողովակաշարը բացարձակապես անց է կացվում երկաթուղու առանցքով:

Առաջիկայում՝ մի օր, անպայման կարգավորվելու է Դարբասյանի հակամարտությունը: Սրան հետեւելու է այլեւս ռուսական, ադրբեջանական եւ վրացական երկաթուղիներն Իրանին ու Թուրքիային կապակցելու մենաշնորհը կորցրած հայկական երկաթուղու վերականգնումը: Որ թվարկածու կառույցները խոչընդոտելու են երկաթուղու վերականգնմանը՝ կասկածից վեր է: Ոչ ոք երկաթուղու չի շահագործի բարձր ճնշումային խողովակաշարի վրա:

Թե ինչու՞ են այլընտրանքի առկայության պայմաններում կառուցապատումներն արվում երկաթուղու վրա՝ խոչընդոտելով երկաթուղու հետագա վերականգնումը, թող իշխանությունները բացատրեն:

Իսկ առաջատար երկրների դեսպանները շարունակում են հետաքրքրվել երկաթուղով...

Հ.Գ. Երբ Հայաստանում որեւէ առիթ բաց չեն թողնում տարածաշրջանային զարկերակ հանդիսացած երկաթուղուն հերթական մահացու հարվածը հասցնելու, պաշտոնապես հայտարարվել է նրա այլընտրանքներից մեկի՝ Բաթու-Ախալբալաք-Կարս երկաթուղին հոկտեմբերի 30-ից շահագործելու մասին: Իսկ Պակիստանը հայտարարել է, որ ցանկանում է միանալ Ադրբեջանի, Իրանի եւ Ռուսաստանի երկաթուղիները միավորող «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի նախագծին: Այս միջանցքի ավարտը եւս մոտ է: Ակտիվորեն կառուցվում է Ադրբեջան Իրանին կապող, վերջին Աստարա-Ռեշտ հատվածը:

Ո՞վ է «գունավոր» եւ «թավշյա» հեղափոխությունների հովանավոր համարվող Ջորջ Սորոսը

էջ 2
կազմակերպությունների բողոքներին, Հունգարիայի նախագահ Յանոշ Ադե-րը ստորագրեց օրենք, որի համաձայն փակվեց Սորոսի կողմից ֆինանսավորվող CEU համալսարանը:

Սակայն, սրանով Հունգարիայում Սորոսի դեմ պայքարը չավարտվեց: Անձամբ Վիկտոր Օրբանի օգնությամբ ցույցեր կազմակերպվեցին, որոնք պահանջեցին Սորոսին չխառնվել երկրի ներքին քաղաքական հարցերին՝ վնասելով պետական շահերը:

Հունգարիայում ընթացող ցույցերը փորձեցին օգտագործել որոշ հակապետական կազմակերպություններ՝ ներկայացնելով դրանք որպես հակասեմիթական եւ փորձ կատարելով սրել Հունգարիայի ու Իսրայելի հարաբերությունները: Սակայն, որոշ ժամանակ անց Հունգարիա այցելեց Իսրայելի վարչապետ Նեթանյահուն, ով իր աջակցությունը հայտնեց Վիկտոր Օրբանին՝ Ջորջ Սորոսի գործունեությունը քննադատելու համար:

Արևելյան եվրոպա

Լեհաստանի իշխանությունները նույնպես նախաձեռնել են արշավ ընդդեմ Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների, մասնավորապես Batory հիմնադրամի դեմ, որը միլիարդավոր եվրոներ է տարեկան ուղարկում լեհական ԴԿ-ներին, որպեսզի 2020 թվականին հասնի իշխանափոխության: Լեհաստանի իշխանությունները պնդում են, որ ինչքան էլ հայտարարվում է, թե խորհրդարանական ժողովրդավարության առաջնորդն է նպատակ ունեն այդ ԴԿ-ները, բայց իրականում խոսքը վերաբերում է ավանդական կաթոլիկ արժեքների ոչնչացմանը:

Իշխող կուսակցության ղեկավար Յարոսլավ Կաչինսկին էլ հայտարարել է, որ Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունները նպատակ ունեն ոչնչացնել լեհ հասարակության ազգային ինքնությունը, եւ կողմ է եղել Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների նկատմամբ կառավարության կողմից առաջարկվող սահմանափակումների կիրառմանը: Լեհաստանի նախագահ Միլոշ Զեմանն էլ հայտարարեց, որ «Բաց հասարակության հիմնադրամ»-ը փորձում է Լեհաստանի ներքին գործերի մեջ խառնվել:

«Ես լուրջ հարցեր ունեմ պարոն Սորոսին, նրա հիմնադրամներն ու համակարգերը Լեհաստանում ֆինանսավորում են մոտ 90 կազմակերպություններ, որոնք գրեթե բոլորը են կասկածելի քաղաքական գործունեությամբ եւ բողոքի ակցիաներ են կազմակերպում»,- իր ելույթում ճշել է ռումինական սոցիալիստական կուսակցության ղեկավար Լիվիու Դրագանան՝ կոչ անելով խստացնել ոչ պետական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը:

Բուլղարիայի, Սերբիայի եւ Սլովակիայի քաղաքական գործիչներն էլ բազմաթիվ անգամներ հանդես են եկել ելույթներով եւ կոչերով՝ քննադատելով Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների ոչ ազգանպաստ եւ պետական ինստիտուտները թուլացնող գործունեությունը:



ԱՄՆ

ԱՄՆ-ում Ջորջ Սորոսն ավանդաբար աջակցում է գաղափարապես իրեն ավելի մոտ դեմոկրատական կուսակցությանը: ԱՄՆ վերջին նախագահական ընտրությունների ժամանակ Սորոսն աջակցել է Հիլարի Բլինթոնին եւ սուր քննադատել Դոնալդ Թրամփին: Մոտ 600 միլիոն դոլար Սորոսը ծախսել է ԱՄՆ-ում մարիխուանայի օրինականացման եւ թմրամյուսթի օգտագործման համար քրեական պատժից ազատելու օրենսդրական փոփոխությանը հասնելու համար:

Սակայն Թրամփի ընտրվելուց հետո ԱՄՆ բնակչությունը պահանջ հնչեցրեց՝ Սորոսին ԱՄՆ-ից վտարել՝ մեղադրելով վերջինիս նախնադրում խառնակցություններ հրահրելու, ԱՄՆ տնտեսությունը քայքայել փորձող կազմակերպություններին ֆինանսավորելու, պետական ադմինիստրատիվ համակարգը քայքայել փորձելու մեջ՝ որակավորելով այս արարքները որպես ներքին ահաբեկչություն: Կազմակերպված ստորագրահավաքի տակ ստորագրել էին 150 հազարից ավել ԱՄՆ քաղաքացի:

Նշենք նաեւ, որ Դոնալդ Թրամփի ԱՄՆ նախագահ ընտրվելուց հետո Ջորջ Սորոսը կորցրեց 1 մլրդ դոլար: Կան նաեւ բազմաթիվ այլ հիմնավոր փաստեր, որոնք վկայում են այն մասին, որ Սորոսը եւ Թրամփի թշնամիներ են:

Մեծ Բրիտանիա

Համարվում է, որ բոլոր երկրներից ամենաշատը հենց Մեծ Բրիտանիան է տուժել Ջորջ Սորոսի գործողություններից, երբ վերջինս 1992-ին մեկ օրում մեկ միլիարդից ավելի գումար է աշխատել՝ արժույթային շուկայում հզոր մախիանգիա կատարելու արդյունքում. Սորոսը գնել է բրիտանական ֆունտ ստերլինգի հսկայական քանակ եւ փոխանակել գերմանական մարկի հետ, ինչը հանգեցրել է բրիտանական ֆունտ ստերլինգի ակնթարթային արժեզրկմանը: Այս ամենի արդյունքում Բրիտանիայում առաջացավ տնտեսական լուրջ ճգնաժամ, ապրանքները թանկացան, կտրուկ աճեց գործազրկությունը: Այս վիճակից դուրս

գալու համար Բրիտանիային մի քանի տարի պետք եկավ: Հաջորդ հարձակումը Բրիտանիայի վրա եղավ արդեն 2017-ին, երբ Սորոսի կողմից ֆինանսավորվող միջազգային լրագրողական հետաքննությունների կոնսորցիումը նյութեր հրատարակեց այն մասին, որ Անգլիայի թագավորական ընտանիքն օՖշորային ներդրումներ է կատարում: Չնայած այն փաստին, որ թագավորական ընտանիքի օՖշորային ներդրումներն օրինական են, միեւնույն է, դա հարվածեց թագավորական ընտանիքի իմիջին:

Պատահների վրա գրված է՝ ամեն ինչում մեղավոր է Սորոսը:

Նշենք, որ 2015-ին «Բաց հասարակության հիմնադրամ»-ի գործունեությունը ՌԴ-ում համարվել է անցանկալի եւ կասեցվել է:

Հարկ ենք համարում ներկայացնել նաեւ Հայաստանում գործող հիմնադրամների ու ԴԿ-ների ընդամենը մի մասը, որոնք ֆինանսավորվում են Ջորջ Սորոսի կողմից, իսկ վերջինիս գաղափարական առանձնահատկություններին են նպատակների կանոնադրմանը մեր առաջիկա հրատարակումներում:

Սորոսի հիմնադրամ՝ պաշտոնական անունը՝ «Բաց հասարակության հիմնադրամ» (Open Society Foundations, OSF) :

Այս հիմնադրամի կողմից են ֆինանսավորվում Amnesty International, Human Rights Watch, Mercy Corps, International Crisis Group միջազգային կազմակերպությունները:

«Բաց հասարակության հիմնադրամ»-ը (Open Society Foundations, OSF) Հայաստանում գրանտներ է տալիս 1998 թվականից: Ներկայացնում ենք վերջին տարիներին այս հիմնադրամից խոշոր գրանտներ ստացած կազմակերպությունների մի մասը.

Transparency International հակալուծույթի կենտրոն:

Հանուն դեմոկրատիայի համագործակցություն, որի շրջանակներում գործում է religions.am կայքը:

Մեր իրավունքների սահմանները ԴԿ

Ասպարեզ (Գյումրի) լրագրողական ակումբ

Հասարակական լրագրության ակումբ Գորիսի մամուլի ակումբ ԴԿ

Մանդատ ԴԿ

Հայաստանի Հելսինկյան կոմիտե Ազատ խոսքի իրավունքի պաշտպանության կոմիտե ԴԿ

Մարդու իրավունքի զարգացման կենտրոն ԴԿ (HealthRights.am կայք)

Կանանց ռեսուրսների կենտրոն Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա • Փինք Հայաստան

Պաշտպանություն ԴԿ MediaLab

Իրական աշխարհ, իրական մարդիկ ԴԿ Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության կենտրոն Բուն TV

Հասարակական քաղաքականության ինստիտուտ (Institute of Public Policy)

Khoran Ard ԴԿ

Նոր սերունդ մարդասիրական ԴԿ Հուլյա Կամուրջ ԴԿ

Արմավիրի զարգացման կենտրոն ԴԿ Մարտունու կանանց համայնքային խորհուրդ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման կոալիցիա ԴԿ

Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների ԴԿ

Իրազեկ քաղաքացիների միավորում Դիսկրիմինացիայի դեմ պայքարի եւ հավասարության առաջնորդման միավորում

Հանուն հավասար իրավունքների ԴԿ, որին կից գործում է Հոդված 3 հասարակական ակումբը

Սորոսի կողմից դրամաշնորհներ են ստացել ու ստանում մի շարք ԶԼՄ-ներ, բազմաթիվ բարեգործական եւ իրավական կազմակերպություններ՝

Unison, Tax-Payers and Businessmen's Rights Protection, Europe in Law Association, Armenian Innocence Project, CPI Rights Protection Armenian Center, Arevamanuk, Near East Foundation

Armenian Branch, Media Partners, Sexual Assault Crisis Center, Women's Support Center, NGO եւ այլն:

Հաշվի առնելով այն փաստը, որ Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունները, ԶԼՄ-ները եւ հիմնադրամները բավականին շատ են Հայաստանում, առանձին հոդվածով մանրամասն կներկայացնենք դրանք, ինչպես նաեւ այն մարդկանց, ովքեր տարիներ շարունակ աշխատել են տվյալ ԴԿ-ներում կամ ակտիվ համագործակցել են դրանց հետ :

Առաջիկա հրատարակումներում կներկայացնենք նաեւ Սորոսի հիմնադրամների գաղափարների եւ դրանց աշխարհով մեկ տարածման եւ իրագործման հիմնական նպատակները: 2

«Անալիտիկ» վերլուծական թիվ analitik.am

Փաստաբանի տրեխներով այս տղան կկարողանա՝ երբեւէ տիրապետել իր փեշակին, թե՛...

էջ 5
Եվ այնքան ստրուկ է, որ չի ուզում խոստովանել՝ գործերի քննությունը ձգձգվում է, քանի որ ինքը վստահորդի հաշվին փող աշխատելու տեղ է գտել հազիվ:

Ու տանը փակվելու եւ համալսարանում բաց թողած դասերը գոնե ուշացունով սովորելու, գործող օրենքներին ու նախադեպային իրավունքին քիչումիչ ծանոթանալու, սեփական իմացությանը պատած աննախադեպ երաշտը հաղթահարելու փոխարեն, երկրորդ անգամ ստանձնում է հեռուստաշոուի դերասանի վիճակը:

Տեսանյութում խոսում է նաեւ մեր թորշո-

մած բանասրկուն: Եիչուն ասած այդ տղայի դեմքին մայելիս միշտ էլ խղճահարությամբ ենք լցվել եւ ակամար է աշխատել՝ բա արժե՛ր մի քանի մանեթի համար նման դրության մեջ հայտնվել եւ քոռ գործիքի դեր ստանձնել:

Այս անգամ, սակայն, խղճահարության փոխարեն մեզ պատեց գվարճության զգացումը. նա փորձում էր խոսել «ամբողջ հասարակության» անունից:

Շատ գարնացա՞մ. մինչ այդ թվում էր, թե նա կարող է իմանալ, ասենք՝ ո՞նց են սվաղ անում, ո՞ր խանութի ցեմենտը կամ գաջն է

որակյալ, ո՞նց կարելի է պատը ներկելիս մի փոքր խալտուրա անել, մինչդեռ, պարզվում է՝ գիտի նաեւ գորիսան հանրության կարծիքն ու դիրքորոշումը:

Հա, նաեւ Գորիսում իշխող վախի մթնոլորտի մասին է բարբաջում:

Իրականում, սակայն, Գորիսում մի հոգի կարող է լինել խուճապի մատնված. դա մեր սիրելի եւ աննոռանալի բանասրկուն է, ով հայցվորից հաշտություն աղերսելու հաջորդ օրը եկավ ու հրաժարվեց հաշտությունից՝ խոստովանելով, որ իրեն կպանեն, եթե ինքը հաշտության գնա, եթե ինքը դադարի կաղ-

կանձել հայցվորի դեմ...

Ինչեւէ, մենք հաջողություն ենք մարդուն գրպարտիչների ու բանասրկունների գվարդիայի առաջապահներին, նրանց սպասարկող եւ ֆինանսավորող «թըմ»-ին՝ ակնկալելով, որ հաջորդ դատական նիստին կներկայանան ապացույցների բեռով ու հերթական հեռուստանկարահանմանը կազմ ու պատրաստ...

Սամվել Ալեքսանյան 31 օգոստոսի 2018թ.

Վրույր Ստեփանյանի անսպասելի եւ ողբերգական մահը



Օգոստոսի 28-ին դաղարեց բարախել Վրույր Ստեփանյանի սիրտը. մահվան հարվածն այնքան հանկարծակի էր ու այնքան ուժգին, որ բժշկական որեւէ օգնության կարիք այլեւս չկար, ամեն ինչ ավարտվել էր վայրկյանների ընթացքում...

Եվ աշնանամուտի պերճանքով զարդարված Գորիսը, գույժը լսելուց հետո, միանգամից պատվեց վշտի եւ սգի թանձր խավարով, քանզի կորցրել էր իր լավագույն զավակներից մեկին:

Երբ Արցախյան պատերազմում կամ պարիսյան իրադարձությունների հերոսական օրերին կորցնում էինք հայոց քաջարի զավակներին, օրերի շփոթի մեջ երբեմն չէինք հասցնում նույնիսկ պատշաճ խոսք ասել նրանցից յուրաքանչյուրի մասին: Ու մեզ թվում էր, թե քարասիրտ ենք դարձել, կամ էլ ինքններս մեզ հավատացնում էինք, թե մահը, հակառակ բնության օրենքների, տարիքային սահմաններն է խախտել այդպիսի փորձելով մխիթարվել եւ հաշտվել իրականության հետ:

Մինչդեռ այդպես չի եղել եւ այդպես չի կարող լինել երբեք: Դեռաջող, անցնող յուրաքանչյուր մարդու հետ մի ամբողջ աշխարհ ենք կորցնում:

Վրույրի դեպքում հատկապես այդպես է, որովհետեւ դեռ շատ երիտասարդ էր, կենսախիճը, եռանդով լեցուն, որովհետեւ դեռ շատ ծրագրեր, երազանքներ, անելիքներ ուներ:

Որովհետեւ մեկ շաբաթ առաջ էր լրացել ամուսնության տասը տարին:

Որովհետեւ դուստրը՝ Սյունեն, դեռ ինը տարեկան է, որդին՝ Էդուարդը՝ չորս տարեկան՝ հայրական խնամքին, գուրգուրանքին արդեն սովոր ու արդեն կարոտ:

Որովհետեւ նոր-նոր մոտեցել էր սեփական բնակարան ունենալու խնդրի լուծմանը:

Որովհետեւ ճակատագիրը նրան էղիկ Ստեփանյանի ճղակատր ընտանիքը վերաշինելու եւ հովանի լինելու վիճակ էր սովել:

Բայց նրա կյանքը դաժանորեն քիչ եղավ. մեկ ամիս հետո՝ սեպտեմբերի 29-ին, կդառնար 44 տարեկան, եւ այդ ամենը մնաց անկատար:

Ահա թե ինչու նրա վախճանը ողբերգականություն է ամբողջապես:

Իրոք որ անփոխարինելի կորուստ ունեցանք: Անփոխարին-

ելի ոչ միայն Ստեփանյանների, Մարությանների գերդաստանի, այլեւ մեր ամբողջ քաղաքի, տարածաշրջանի հանրության եւ առանձնապես երիտասարդության ու մտավորականության համար:

Լուսեղեն մի ոգի կար նրա մեջ, որ սովորաբար հայկականություն ենք անվանում:

Բացառիկ ընկալունակությունը, սահման չճանաչող բարությունը, քրիստոնեական վարքը, կամեցողությունը, ամենադժվար իրավիճակներում մարդ մնալու, ընկեր ու բարեկամ մնալու, չաղարտվելու բնատուր հատկանիշներն էին պատճառը, որ ճանաչողների համար նա ոչ թե սոսկ Վրույր էր, այլ՝ հարազատ ու մերձավոր, ինչպես ասում էին «մեր Վրույրն էր»:

Երեկ՝ հոգեհանգստի ժամին, հարյուրավոր մարդիկ էին այցելում նրա աճյունին՝ խոնարհվելու, եւ, ինչպես սպասելի էր, մարդիկ ոչ միայն ցավակցում էին հարազատների ու մերձավորներին, այլ՝ միմյանց, որովհետեւ ինքը բոլորին էր, ինքը «մեր Վրույրն էր»:

Նրա ներկայությունը սովորի տակ էր թողնում չարությունը, քինախնդրությունը, սխալն ու անտրամաբանականը:

Նրա ներկայությունն ընկերություն, բարեկամություն, սեր, հանդուրժողականություն էր սերմանում միջավայրում ու մարդկանց հարաբերություններում:

Նրա տեսակը մեզանում, հատկապես ոչ սովորական մեր օրերում, անհրաժեշտություն էր՝ հաշտեցնող, խաղաղեցնող, հանդուրժումի, փոխադարձ հարգանքի, փոխադարձ ըմբռումի վարք պարտադրող:

Եվ նրա կորստով մեզանից խլվեց բացառիկ այդ արժեքները կրող մի բարձր ներկայություն:

Վրույրը հանրային ճանաչման արժանացավ նաեւ իր աշխատանքային գործունեությամբ:

Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, ապա Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի մեքենաշինության ֆակուլտետը 1996 թվականին ավարտելուց հետո աշխատեց Գորիսի մի շարք կազմակերպություններում:

Վերջին աշխատավայրը, որտեղ եւ առավել մեծ ճանաչում էր ձեռք բերել ու ինքնադրստելվել, ճանապարհային ոստիկանության Գորիսի հաշվառման քննական խումբն էր:

Օրական գրեթե տասնյակ մարդկանց հետ շփվող, այդ ոլորտում Գորիսի ու Միխիանի տարածաշրջանների բնակչությանը սպասարկող գործավարն առանձնանում էր սպասարկման եւ մարդկանց հետ շփվելու բարձր կոլտուրայով, բանիմացությամբ, պատասխանատվությամբ, ինչի համար արժանացել է ոչ միայն մարդկանց երախտագիտությանն ու դրվատանքին, այլեւ ոլորտի ղեկավարների հիացական գնահատանքին:

Վրույրն էղիկ Ստեփանյան եւ Սիլվա Նալբանդյան ծնողների զավակն էր:

Ցավոք, նրանք էլ վաղաժամ հեռացան մեզանից, բայց նրանց անունն ու գործն իմ սերնդակիցների կյանքին ու կենսագրությանը հյուսված են ամուր թելերով, ինչի համար էլ հիշվում են մինչեւ հիմա ու հիշվելու են հետայսու:

Էղիկ Ստեփանյանը մեր քաղաքի ու տարածաշրջանի մարդկանց կյանքի, ապա հրատարակչական գործի երեւելի կազմակերպիչներից էր, նաեւ հասարակական-քաղաքական կյանքի մշակավոր դեմքերից: Մահկանացուն կնքեց 2003-ի նոյեմբերի 11-ին՝ 57 տարեկանում:

Սիլվա Նալբանդյանը Գորիսի պետական համալսարանի դասախոսներից էր եւ մեծ ներդրում ունեցավ մեր երկրա-

մասում բուհական կյանքի նորովի սկզբնավորման գործում: Կյանքից հեռացավ 2013 թվականի հոկտեմբերի 16-ին՝ 64 տարեկանում:

Ծնողների վաղաժամ մահը, ինչպես նշեցի, նրա, նաեւ եղբոր ու քրոջ ուսերին դրեց օջախը պահելու, պահպանելու, ավանդույթները շարունակելու ոչ դյուրին առաքելությունը, բայց...

Եվ չտա Աստված, որ Վրույրի անավարտ գործերը, երազանքները կիսատ մնան:

Գրեթե վստահ եմ, որ այդպես չի լինի: Ու այդ վստահությունը ներշնչում են նրա տիկնոջ՝ Թեհմինա Մարությանի մարդկային տեսակն ու կերպարը:

Հոգեւոր Սյունիքի մեր օրերի երեւելի այդ դեմքը Վրույրի հետ ստեղծել է հիրավի ընդօրինակման արժանի ընտանիք, որը նաեւ ոգեշնչման աղբյուր էր հանգուցյալի համար:

Իսկ հիմա... Երիցս ափսոս, որ Վրույրը հեռանում է մեզանից: Բայց ավաղ ասելու, ողբալու հետ մեկտեղ արիանալու, տոկալու, դիմանալու, դիմակայելու, այդ մեծ ցավը զսպելու ժամն է հիմա, այնպես նրա հիշատակի հանդեպ մեր հարգանքն ինքնանպատակ կլինի, այնպես նրա կիսատ թողած գործերն ավարտին հասցնելու, նրա հիշատակն արժանապատիվ պահելու մեր ուժը վստահված ու ջլատված կլինի:

Այդ դիտարկումն ուղղում են ոչ միայն մեծահարգ տիկին Թեհմինա Մարությանին, այլեւ եղբորը՝ Գոռին, քրոջը՝ Սոնային, հորեղբայր Վլադիկին, հորաքույրներ Դոնարային եւ Անահիտին:

Գրիգոր պապի եւ Սոնա մեծ մայրիկի օջախի բարախյունը պետք է շարունակվի արժանավորապես, ինչպես մինչեւ հիմա, ինչպես տարիներ շարունակ:

Մանավանդ որ մխիթարվելու քիչ պատճառներ չունենք:

Վստահաբար եմ ասում՝ Վրույրը դեռ տարիներ առաջ դասակից ու պատվակից եղավ բոլոր այն արժանավոր գորիսեցիներին, ովքեր իշխանական մտույզի վրա երբեք չգտնվելով, նյութական ռեսուրսների չտիրապետելով, իրենց պահվածքով եղել են անվիճելի հեղինակություն իրենց բաժին ժամանակի մեջ, իրենց ապրած միջավայրում: Ու այդ հեղինակությունը ծառայեցվել է հասարակությանը, որի համար ժամանակակիցներս հիշելու ենք նրան ընդմիջ, իսկ նրա զավակները մարդկանց աչքերին ուղիղ եւ հպարտ նայելու իրավունք են ունենալու, ինչպես որ ունեն:

Եվ ուրեմն՝ հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

Սուրբ գրքի այս խոսքի հովանու ներքո էլ ուզում են ձեզ հետ միասին աղոթք բարձրացնել առ Աստված՝ մնջեցյալի հոգու խաղաղության համար:

Եվ թող դա լինի Քրիստոսի կողմից սահմանված աղոթքը: Եվ թող այդ աղոթքով էլ Վրույր Ստեփանյան մեր զավակին իջեցնենք գերեզման:

Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը, Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես երկնքում է, մեր ամեն օրվա հացը տուր մեզ այսօր, ներքի մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեզ պարտք եղողներին: Եվ մի տար մեզ փորձություն, այլ փրկիր մեզ չարից, քանի որ Քոն է թագավորությունը, եւ գորությունը, եւ փառքը հավիտյանս հավիտենից. Ամեն:

Տամվել Ալեքսանյան
30 օգոստոսի 2018թ

Բունդեսբանկի պատգամավոր Ալբերտ Վայլերն այցելեց Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ



«Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությանը ծանոթանալու նպատակով օգոստոսի 25-ին կոմբինատ է այցելել Գերմանիայի խորհրդարանի ստորին պալատի Բունդեսբանկի պատգամավոր Ալբերտ Վայլերը, ով ընդգրկված էր պաշտոնական այցով Հայաստան ժամանած Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելի գլխավորած պատվիրակության

կազմում: Այդ պատվիրակության կազմում է նաեւ «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր բաժնետեր, «Քրոնիմետ մայնինգ» ԲԸ խորհրդի նախագահ Գյունտեր Պիլարսկին: Գերմանացի պատգամավորը շրջայց է կատարել ձեռնարկության տարածքում, ծանոթացել ընկերության աշխատանքին եւ իրականացվող ծրագրերին: Հիշեցնենք, որ Ադրբեջանի որոշմամբ Բունդեսբանկի պատգամավոր Ալբերտ Վայլերի մուտքը Ադրբեջան արգելվել է: Վերջինս հայտնվել է Ադրբեջանի ԱԳՆ-ի պատրաստած Արցախ այցելած օտարերկրացիների սեւ ցուցակում ու հայտարարվել որպես պերտոնա նոն գրաստա: armtimes.com

Գորիսի սոցիալական գործակալության աշխատակցի կողմից նպաստառուներից ապօրինի վարձատրություն ստանալու դեպքի առթիվ քրոջը է հարուցվել

Սյունիքի մարզի Տեղ գյուղի մի բնակիչ 2018թ. ոստիկանության Գորիսի բաժնում հաղորդում, ապա նաեւ բացատրություն է տվել այն մասին, որ իրենք 2013-2018թթ. հաշվառված են եղել որպես անապահով ընտանիք՝ յուրաքանչյուր ամիս ստանալով սոցիալական աջակցության նպաստ: Սակայն ամենամյա նպաստը ձեւակերպելու համար գործակալության աշխատակցին են տվել յուրաքանչյուր տարվա երկու ամսվա գումարը: ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից նշեցին, որ հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ սոցիալական աջակցության Գորիսի տարածքային գործակալության մշակված բնակավայրն սպասարկող առաջատար մասնագետը տվյալ բնակչի օգտին իր լիազորությունների շրջանակում գործո-



ղություն կատարելու՝ սոցիալական անապահովության նպաստի գործը կազմելու, ապա շարունակաբար նրա համար սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ առաջարկություններ կայացնելու դիմաց 2013-2017 թթ. ամսամբ պահանջել եւ նրանից տարեկան ստա-

ցել է ապօրինի վարձատրություն: «Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առերեսույթ առկա են պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու եւ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու հատկանիշներ մատնանշող բավարար տվյալներ՝ մինչդասական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնող, Սյունիքի մարզի դատախազի տեղակալի կողմից հետաքննության մարմնին տրվել է ցուցում՝ հարուցել քրեական գործ եւ նախաքննություն կատարելու համար ուղարկել քննչին», - ասացին ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից: armenpress.am

Զորաց քարերում ավարտվել է պեղումների հերթական փուլը

Օգոստոսի 1-ից 24-ը Զորաց քարեր հուշարձանի տարածքում հերթական պեղումներն էին կատարվում:

15 հոգուց բաղկացած հնագիտական արշավախումբը ղեկավարում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների և Գերմանիայի ԷՎԱՆ ակադեմիայի արտասահմանյան անդամ, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց - թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական քարտուղար Աշոտ Փիլիպոսյանը:

Օգոստոսի 25-ին «Այունյաց երկիր» ստեղծագործական խումբն այցելեց հուշարձանի տարածք: Սակայն Աշոտ Փիլիպոսյանն արդեն մեկնել էր Երեւան, եւ մեր հանդիպումը չկայացավ:

Մենք գրույց ունեցանք «Զորաց քարեր» արգելոց - մասնաճյուղի վարիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ճանաչված գեղանկարիչ Աշոտ Ավագյանի հետ:

Նա բարձր գնահատեց արշավախմբի գործունեությունը՝ համառոտ ներկայացնելով եւ ցույց տալով կատարված աշխատանքները:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ կատարվող աշխատանքները կշարունակվեն նաեւ 2019-ին:

Ի դեպ, Զորաց քարերը շարունակում են գրավել Այունիք այցելած զբոսաշրջիկների ուշադրությունը. օրական 200-300 զբոսաշրջիկ է այցելում հնավայր:

Աշոտ Ավագյանին, սակայն, հայտնի չեն պատճառները, թե ինչու 2018-ին հետաձգվեց հնավայրին կից նախատեսված օժանդակ կառույցների շինարարությունը:

Օգտվելով առիթից՝ հետաքրքրվեցինք ս.թ հունիսի 7-17-ը Ֆրանսիայի Լիոն քաղաքում կազմակերպված ցուցահանդեսով, որին չորս գեղանկարիչ մասնակցել էր նաեւ սյունեցի գեղանկարիչ Աշոտ Ավագյանը, ինչը, անշուշտ, խոսակցության առանձին նյութ է:

Հ.Գ. - 1



Աշոտ Փիլիպոսյան



Աշոտ Ավագյան



Օգոստոսի 27-ին հեռախոսազրույց ունեցանք արշավախմբի ղեկավար Աշոտ Փիլիպոսյանի հետ՝ կամենալով ճշտել 2018թ. պեղումների արդյունքները: Նա մասնավորապես ասաց. «Հուշարձանի արեւելյան կողմում՝ ձորի մի եզրից մինչեւ մյուսը՝ մոտ 370 մ երկարությամբ, ուղղահայաց տեղադր-

ված են բազալտե մեծ քարեր, որոնց մի մասն անցքեր ունի՝ հիմնականում վերին մասում: Այդ քարերի տակ նկատվում էին պատի շարվածքի մնացորդներ, որ սկսեցինք պեղել 2017-ին: Այդ ժամանակ բացեցինք մոտ 10 մ երկարությամբ պատաշար: Աշխատանքները շարունակվեցինք այս տա-

րի, եւ բացված պատաշարի երկարությունը հասցրինք 25 մետրի:

Պատաշարն ունի մոտ երկու մետր բարձրություն, 1,5-2,5 մ լայնք, որը նաեւ միացված է բնական ժայռին:

Եվ այդ պատաշարը ձգվում է հարավից հյուսիս:

Այս տարի պատաշարի մի հատվածում՝ պատի մեջ, բացվեց մարդկային թաղում: Կմախքի մնացորդների հետ հայտնաբերվեցին խեցու բեկորներ՝ մ.թ.ա. 7-6-րդ դարերին պատկանող, նաեւ ականջօղ ու ապարանջան:

Դա հավանաբար ուշ Ուրարտական կամ Աքեմենյան շրջանի թաղում պետք է լինի:

Դրանով մեկ անգամ եւս հաստատվեց, որ կառույցը պատկանում է մ.թ.ա 7-6-րդ դարերին:

Արշավախումբը միաժամանակ պեղումներ կատարեց հնավայրի դամբարանաշտում՝ 20 մ տրամագծով եւ կլոր քարաշար հիմքով պահպանված հատվածում: Պարզվեց, որ դամբարանն ունեւ 7,6 մ երկարություն, մոտ 3 մ լայնք»:

Հ.Գ. - 2

Եվ Աշոտ Փիլիպոսյանը, եւ Աշոտ Ավագյանը դատապարտեցին օգոստոսի 22-ին հնավայրում տեղի ունեցած միջադեպը:

Ըստ նրանց՝ Սիսիան քաղաքի մի խումբ բնակիչներ եկել էին պահանջելու, որ հուշարձանն այսուհետ եւս կոչվի աստղադիտարան ու ոչ թե բնակատեղի՝ դրա համար չունենալով գիտական որեւէ հիմնավորում:

Մոտ երկու ժամ այդ օրը դադարեցվել էին պեղումները:

Արշավախմբի անդամները դրսևորել են զսպվածություն ու չեն արձագանքել քաղաքացիների հուզական քայլերին եւ արտահայտություններին:

Ինչ վերաբերում է քաղաքացիների դիմումին՝ այդ առիթով երկրի պատկան մարմիններին հրահան, ապա դա, ինչպես ասացին մեր զրուցակիցները, իրենց իրավունքն է, սակայն որեւէ կերպ չի կարող անդրադառնալ Զորաց քարերում հետազոտված եւս կատարվող հնագիտական աշխատանքներին:

«Այունյաց երկիր»

Սիսիանի մի խումբ քաղաքացիներ դեմ են Զորաց քարերում իրականացվող պեղումներին

Սիսիան քաղաքի մի խումբ բնակիչներ օգոստոսի 22-ին այցելել են Զորաց քարեր հնավայր եւ իրենց դժգոհությունն արտահայտել տարիներ շարունակ այնտեղ կատարվող հնագիտական աշխատանքների առիթով:

Ինչը՝ վ է պայմանավորված քաղաքացիների դիրքորոշումը:

Նրանց նկատառումներին ծանոթանալու համար իրապարակում ենք հանրապետության պատկան մարմիններին հղած դիմումը՝ եզրակացությունը, բնականաբար, թողնելով հնազետներին եւ ոչ ամենեւին տեղական հայրենասիրությամբ առաջնորդվողներին, ինչը, անշուշտ, գնահատելի է...

«Այունյաց երկիր»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին, ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցին, ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Զարուբանյանին

Սույն թվականի օգոստոսի 20-ին Զորաց քարեր արգելոցի տնօրեն Աշոտ Ավագյանի ֆեյսբուքյան էջից տեղեկացանք, որ պե-

ղումներ են իրականացվում այդ տարածքում: 22.08.2018թ. նախաձեռնող խմբով այցելեցինք հուշարձան, պահանջեցինք պեղումներ իրականացնող արշավախմբի ղեկավար Աշոտ Փիլիպոսյանին՝ դադարեցնել պեղումները: Խոսակցության ընթացքում, եւ դիտելով նրա նախորդ գիտարշավների արդյունքում տված հարցազրույցն այդ թեմայի վերաբերյալ, մեզ պարզ դարձավ, որ նա ի սկզբանե հակված է Զորաց քարերը հնագույն աստղադիտարան լինելու փաստը ժխտելուն եւ ակադեմիկոս Պ. Զերուհունու պախարակելուն:

Պարզեցինք, որ պեղումներն իրականացվում են ոչ առաջին տարին: Պեղումներն իրականացվում են հուշարձանի մաս հանդիսացող մի քանի դամբարաններում: Բայց հուշարձանի գլխավոր առանձնահատկություն հանդիսացող մենհիրները (ուղղահայաց կանգնեցված քարեր) չեն պեղվել: Նշենք, որ ակադեմիկոս Պ. Զերուհունու՝ հուշարձանի աստղադիտարան լինելու ապացույցներն արվել են մենհիրների չափումներով: Որոշ հաշվարկներով տուրիստական ակտիվ շրջանում հուշարձան այցելուների թիվը հասնում է օրական 500-600-ի: Տեղում գրուցելով մի քանի զբոսավարների հետ՝

նրանք նույնպես մտահոգություն էին հայտնում պրն. Փիլիպոսյանի մասն առաջնությունի վերաբերյալ, որտեղ եւս հերքվում է Զորաց քարերի (հեզոնաթրով, կոշտ որակումներով) աստղադիտարան լինելը: Զբոսավարները հայտարարում էին, որ եթե զբոսաշրջիկներին հետաքրքրեն դամբարանադաշտերը, նրանք կայցելեն ք. Երեւանում գտնվող Կարմիր բլուր դամբարանադաշտ կամ Մեծամորի թանգարան: Բայց նրանք Երեւանից անցնում են 220 կմ անմխիթար ճանապարհով, որպեսզի տեսնեն աշխարհի հնագույն աստղադիտարանը:

Հորդորում ենք անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ դադարեցնելու այդ վանդալիզմը, քանի որ Սիսիանի ազգաբնակչության մոտ պայթունավտանգ իրավիճակ է պեղումներ իրականացնողների հանդեպ:

Շատ ցավալի է, որ կրթության նախարարության սուղ միջոցներն ուղղված են հայրենիքի պատմամշակութային արժեքների ոչնչացմանը:

Սիսիանի նախաձեռնող խումբ 22.08.2018թ

Հայտարարություն

ՀՀ ԿԳՆ «Կապանի Հ. Ավետիսյանի անվան N 9 ավագ դպրոց ՊՈԱԿ-ը» հայտարարում է վարձակալության մրցույթ՝ աշակերտներին որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. սեպտեմբերի 10-ին ժամը 12:00-ին:

Հայտերն ընդունվում են մինչեւ 2018թ. սեպտեմբերի 10-ը ժամը 10:00:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 5-26-46:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա, համակարգիչների շահագործում եւ աշխարհագրություն առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-20-99-88 հեռախոսահամարով:

Այունյաց երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԳՈՒԿ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Գապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԳ - ՇԱՆՈՒՑՈՒՄ»
Բաժնուժմ տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-Կոդ



Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 05.09.2018թ.: